

**ՁԵՌՆԱՐԿ  
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԵՐԵՎԱՆ ■ 2006**

ՀՏԴ 347.73:336(479.25)  
ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3  
2-464

*Սույն գիրքը հրատարակվել է Համաշխարհային  
Բանկի Աղքատության հաղթահարման աջակցության  
ծրագրի շրջանակներում*

2-464 **Ձեռնարկ փոքր և միջին ձեռնարկությունների վերաբերյալ:** —  
Եր., Դար, 2006, 68 էջ:

Ձեռնարկում շարադրված են փոքր և միջին ձեռնարկությունների հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական նորմերին համապատասխան: Նախատեսված է փոքր և միջին ձեռնարկությունների ղեկավարների և հաշվապահների համար:

*Սույն գրքի ցանկացած մաս չի բույլատրվում որևէ կերպով փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:*

2 1203020300 2006  
0123(01)2006

ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3

ISBN 99941-47-18-8

© ՀՀ ԿԱ ՀՊԾ, 2006

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

---

1. Պարզեցված հարկը .....	4
2. Հաստատագրված վճարները .....	28
3. Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը .....	39
4. Դրամարկղային գործառնությունների օրենսդրության պահանջների կատարումը .....	52
5. Առաքումների գրանցման գրքի վարումը .....	60
6. Հասույթի գրանցման գրքի վարումը .....	63
7. Պատասխանատվությունը՝ առաքումների գրանցման գրքի և հասույթի գրանցման գրքի օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման համար .....	65

# 1. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸԱՐԿԸ

---

Հայաստանի Հանրապետությունում գործում են հարկման հետևյալ 3 կարգերը՝

- ա) ընդհանուր կամ դասական (շահութահարկ/եկամտահարկ, ԱԱՀ).
- բ) դրան փոխարինող՝
  - հաստատագրված վճարներ (առանձին գործունեության տեսակների համար),
  - պարզեցված հարկ:

«Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ներդրվեց 2000թ. հուլիսի 1-ից: Այդ օրինագծի նախնական անվանումն էր «Փոքր ձեռնարկատիրության պարզեցված հարկի մասին», այսինքն՝ ի սկզբանե այդ հարկատեսակի ներդրման նպատակը այլ լծակների շարքում փոքր ձեռնարկատիրության համար բարենպաստ հարկային պայմանների ստեղծումն էր: Այն համահունչ էր նաև 2000թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

Կազմակերպությունների համար պարզեցված հարկը պետական բյուջե վճարվող՝ շահութահարկին և ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ), իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ եկամտահարկին և ԱԱՀ-ին փոխարինող հարկ է: Պարզեցված հարկի ընդհանուր գումարի մեջ շահութահարկի (եկամտահարկի) հաշվարկային մեծությունն ընդունվում է 40%, իսկ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը՝ 60% (եթե գործունեության այդ տեսակները հարկման ընդհանուր դաշտում հարկվում են ԱԱՀ-ով):

Ի տարբերություն հաստատագրված վճարով հարկման կարգի, պարզեցված հարկով հարկման կարգի ընտրության իրավունքը վերապահված է հարկ վճարողին:

Պարզեցված հարկ վճարողների համար պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կասեցվում են շահութահարկի

(եկամտահարկի) և ԱԱՀ-ի գծով հարկային օրենսդրությամբ սահմանված արտոնությունները:

Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով պարզեցված հարկից ազատելու արտոնության մասին ուղղակիորեն նշված չլինելու դեպքում պարզեցված հարկի գծով արտոնությունը չի կիրառվում և պարզեցված հարկը հաշվարկվում է ընդհանուր սահմանված կարգով:

### **Պարզեցված հարկ վճարողները**

Պարզեցված հարկ վճարող կարող են դառնալ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին սահմանված ժամկետներում և կարգով հայտարարագիր ներկայացրած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, եթե նախորդ տարվա ընթացքում նրանց կողմից մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության (իրացումից հասույթի) ընդհանուր գումարը (այդ թվում՝ պարզեցված հարկով հարկվող, հաստատագրված վճարով հարկվող) չի գերազանցել 50,0 մլն. դրամը (առանց ԱԱՀ-ի):

Ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպություններն են, իսկ ոչ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները՝ օտարերկրյա պետություններում ստեղծված առևտրային կազմակերպություններն են, միջազգային առևտրային կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունների Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված առևտրային կազմակերպությունները, եթե դրանք Հայաստանի Հանրապետությունում իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն մասնագյուղ(եր)ի միջոցով:

Իրացման շրջանառության (իրացումից հասույթի) նկատմամբ շեմի սահմանափակումը տարածվում է.

- ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացված եկամուտների մեջ ներառվող, ինչպես նաև անհատույց (մասնակի հատույմամբ) գործարքների դեպքում հաշվարկվող իրացման շրջանառության (իրացումից հասույթի) վրա,

- ոչ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունների համար՝ միայն հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների մեջ նե-

րառվող, ինչպես նաև անհատույց (մասնակի հատույցմամբ) գործարքների դեպքում հաշվարկվող իրացման շրջանառության (իրացումից հասույթի) վրա:

Տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար գրավոր հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում հունվարի 1-ից 25-ը (ներառյալ): Տվյալ տարում պարզեցված հարկ վճարող հանդիսացող անձինք հաջորդ տարում ևս այդպիսին համարվելու (որպես պարզեցված հարկ վճարող գործունեությունը շարունակելու) համար գրավոր հայտարարագիրը հարկային մարմին են ներկայացնում հաջորդ տարվա հունվարի 1-ից 25-ը (ներառյալ):

Անկախ այդ ժամկետից նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպություններն և անհատ ձեռնարկատերերը պետական գրանցում ստանալու օրվանից համարվում են պարզեցված հարկ վճարողներ, եթե նրանք պետական գրանցման օրվանից 1-ամսյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան պետական գրանցման եռամսյակի վերջին օրը) իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում գրավոր հայտարարագիր: Այդ ժամկետում այդպիսի գրավոր հայտարարագիր չներկայացնելու դեպքում նրանք համարվում են ընդհանուր կարգով հարկ վճարող (այսինքն՝ շահութահարկ (եկամտահարկ) և ԱԱՀ վճարողներ): Ընդ որում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունների համար պարզեցված հարկ վճարող համարվելու նշված հնարավորությունը վերաբերվում է վերակազմակերպման միայն հետևյալ դեպքերին՝

- իրավաբանական անձանց միաձուլման արդյունքում նոր առաջացած առևտրային կազմակերպյանը,
- իրավաբանական անձից առանձնացված առևտրային կազմակերպությանը,
- իրավաբանական անձից բաժանված առևտրային կազմակերպությանը:

**Ուշադրություն.** Հայտարարագիր ներկայացնելու դեպքում առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը համարվում են պարզեցված հարկ վճարող ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակներով (բացառությամբ՝ այն տեսակների, որոնք հարկվում են հաստատագրված վճարներով):

**Պարզեցված հարկ վճարողներ չեն կարող համարվել**

- ա) «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաստատագրված վճար վճարող անձինք՝ գործուներության այդ մասով (այդ թվում՝ սահմանային չափերը գերազանցելու դեպքում)։
- բ) ենթասկզբիցային (այդ թվում՝ դրան փոխարինող հաստատագրված վճարով հարկվող) ապրանքներ արտադրողները։
- գ) այն անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված ապրանքների մնացորդը (հաշվարկված մաքսային արժեքով), որոնց համար ԱԱՀ վճարված չի եղել ներմուծման պահին, հայտարարագրի ներկայացման ամսվա 1-ի դրությամբ գերազանցում է 1,0 մլն. դրամը։

*Ուշադրություն. Եթե ներմուծվող ապրանքների համար օրենքով նախատեսված չէ ԱԱՀ-ի գանձում մաքսային մարմինների կողմից, սակայն հարկ վճարողները մաքսային մարմիններին ներկայացված դիմումի հիման վրա ներմուծման պահին վճարել են այդ գումարը (որն արտացոլվում է մաքսային հայտարարագրում), ապա կարող են համարվել պարզեցված հարկ վճարող: Մաքսային սահմանին վճարված այդ ԱԱՀ-ի գումարները միացվում են ծախսերին պարզեցված հարկ վճարող համարվելու առաջին հաշվետու ժամանակաշրջանում:*

*Ապրանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող՝ հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող գույքը (բացառությամբ՝ դրամական միջոցների): Ընդ որում՝ հիմնական միջոցների և արագամաշ առարկաների մաշվածքը (ամորտիզացիան) հաշվի չի առնվում, իսկ արտադրական (տեխնոլոգիական) պրոցեսում հումք և նյութերի օգտագործման (սպառման) դեպքում մնացորդ չի հաշվարկվում:*

- դ) տվյալ տարվա հունվարի 1-ին 100,0 հազ. դրամը և ավելի գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ վճարման ենթակա պարզեցված հարկը և հաստատագրված վճարները, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը) ունեցող անձինք։

- ե) բանկերը, գրավատները, վարկային և ապահովագրական կազմակերպությունները, ներդրումային հիմնադրամները, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակիցները (արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձինք՝ բրոքերային (դիլերային) ընկերություններ, արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ, արժեթղթերի պահառուներ և օրենքով սահմանված այլ անձինք), արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնողները, խաղատների, շահուճով խաղերի կամ վիճակախաղերի (բացառությամբ՝ գովազդային վիճակախաղերի) կազմակերպիչները.
- զ) իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն իրականացնողները (այդ թվում՝ փաստաբանների վարչանու գործունեություն, խորհրդատվություններ իրավաբանական հարցերով, գործունեություն հաշվապահական հաշվառման բնագավառում, աուդիտորական գործունեություն, շուկայի իրավիճակի հետազոտում և հասարակական կարծիքի բացահայտում, խորհրդատվություններ առևտրային գործունեության և կառավարման հարցերով, կազմակերպությունների կառավարմանը վերաբերող գործունեություն)՝ բացառությամբ խորհրդատվական ծառայություններ մատուցող նոտարների, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազոտման և փորձաքննության գործունեություն իրականացնողները.
- է) այն անձինք, որոնք դադարել են համարվել այդպիսիք՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը (ներառյալ).
- ը) գյուղատնտեսական արտադրանք արտադրողները.
- թ) համատեղ գործունեության պայմանագրի (գրավոր պայմանագրի, որի համաձայն երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատա-



կի հասնելու համար) կողմ հանդիսացող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը.

- ժ) այն առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) պատկանում է մեկ այլ պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպությանը, կամ՝ այն առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) պատկանում է պարզեցված հարկ վճարող անհատ ձեռնարկատիրոջը, կամ՝ այն առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է պարզեցված հարկ վճարող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը), կամ՝

այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց պատկանում է պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը):

Ընդ որում՝ պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագիր հարկային մարմին ներկայացված առևտրային կազմակերպություններից (անհատ ձեռնարկատերերից) պարզեցված հարկ վճարող չեն կարող համարվել այն առևտրային կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը), որոնք սահմանված ժամկետում ժամանակագրական կարգով (օրական կտրվածքով) ավելի ուշ են ներկայացրել պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագիրը հարկային մարմին: Նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) համար հիմք է ընդունվում նաև իրենց ստեղծման (պետական գրանցման) օրը, այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետում նույն օրը պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագիրը հարկային մարմին ներկայացրած առևտրային կազմակերպություններից (անհատ ձեռնարկատերերից) պարզեցված հարկ վճարող չեն կարող համարվել այն առևտրային կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը), որոնք տվյալ տարում ժամանակագրական կարգով (օրական կտրվածքով) ավելի ուշ են ստեղծվել (ստացել պետական գրանցում):

**Ուշադրություն.** Եթե հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող անձինք կարող են պարզեցված հարկ վճարող դառնալ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում չնշված գործունեության տեսակների մասով, ապա այլ սահմանափակումները վերաբերվում են հարկ վճարողի ամբողջ գործունեությանը: Ընդ որում՝ այդ սահմանափակումների կիրառման առումով հիմք է ընդունվում նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում նշված գործունեության տեսակներով զբաղվելու փաստը, իսկ գործունեության այն տեսակների մասով, որոնց զբաղվելու համար նախատեսված է լիցենզիա՝ նաև տվյալ գործունեության լիցենզիայի առկայությունը (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ մինչև սահմանված ժամկետում պարզեցված հարկ վճարող համարվելու համար գրավոր հայտարարագրի ներկայացումը լիցենզիայի գործողությունը դադարեցվել է, որի դեպքում պարզեցված հարկ վճարող համարվելու համար սահմանված պայմանները համարվում են բավարարված):

*Պարզեցված հարկ վճարող համարվելու համար հարկային մարմին ներկայացվող հայտարարագրում՝*

- իրացման շրջանառության նկատմամբ սահմանաչափի (50,0 մլն.) վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարվում է տուգանք՝ սահմանաչափի գերազանցող մասի 20%-ի չափով,
- ոլորտային սահմանափակումների (այսինքն՝ այդ գործունեություն չիրականացնելու) վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարվում է տուգանք՝ 100,0 հազ. դրամի չափով,
- մաքսային սահմանին չհարկվող (և ԱԱՀ վճարելու) ներմուծված և չիրացված ապրանքների վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարվում է տուգանք՝ սահմանաչափի նկատմամբ ներմուծման փաստացի ծավալը գերազանցող մասի 50%-ի չափով:

Այդ խախտումները (այսինքն՝ այն խախտումները, որոնց համար նախատեսված է տուգանք) թույլ տված հարկ վճարողները պարզեցված հարկ վճարող համարվելու համար սահմանված այլ պահանջները բավարարելու դեպքում շարունակում են մնալ պարզեցված հարկ վճարող՝ մինչև տվյալ տարվա վերջը:

### **Պարզեցված հարկով հարկվող օբյեկտը**

Պարզեցված հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի (**հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը**) ընթացքում պարզեցված հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայու-

թյունների (այդ թվում՝ վարձակալության) իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը): Իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) ներառում է նաև ռոյալթիները և փոխառության տոկոսները:

Ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դեպքում իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) որոշվում է այդ գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքից ելնելով: Անհատույց (մասնակի հատուցմամբ), ինչպես նաև փոխանակման գործարքների (գործառնությունների) դեպքում իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) որոշվում է տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող (իրական) գներից ելնելով:

Վարձակալության գործարքներ իրականացնելու դեպքում իրացման շրջանառություն (իրացումից հասույթ) է համարվում այդ գործարքների համար նախատեսված հատուցումը՝ վարձավճարները:

Փոխառության գործարքներ իրականացնելու դեպքում իրացման շրջանառություն (իրացումից հասույթ) է համարվում այդ գործարքների համար նախատեսված հատուցումը (տոկոսները): Փոխառության առարկա հանդիսացող գույքի (բացառությամբ՝ դրամական միջոցների) նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխության դեպքում իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) որոշվում է սպրանքների մատակարարումից առաջացող իրացման շրջանառությանը (հասույթի) համապատասխան:

Հանձնարարության, կոմիսիայի և գործակալության գործարքներ իրականացնելու դեպքում պարզեցված հարկ վճարող հանդիսացող հանձնակատարի, կոմիսիոների և գործակալի իրացման շրջանառություն (իրացումից հասույթ) է համարվում այդ գործարքների համար նախատեսված հատուցումը (միջնորդավճարները՝ գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր):

**Ուշադրություն.** *Հարկվող օբյեկտը (իրացման շրջանառությունը) թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում գանձվում է դրա արդյունքում պակաս հաշվարկված պարզեցված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100%-ի չափով:*

### **Պարզեցված հարկի դրույքաչափերը և հաշվարկումը**

Պարզեցված հարկ վճարողները պարզեցված հարկի գումարների հաշվարկումը կատարում են ինքնուրույն, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի) արդյունքներով իրացման շրջանա-

ռության (իրացումից հասույթի) նկատմամբ հետևյալ դրույթաչափերով.

- ա) խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով՝ 3.5%
- բ) վարձակալության մասով՝ 10%
- գ) այլ գործունեության մասով՝ 5%

**Ուշադրություն.** Այլ գործունեություն է համարվում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության և վարձակալությունից տարբերվող գործունեությունը, այդ թվում՝ ռոյալթիները, փոխառության տոկոսները, հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների և այլ պաշարների օտարումը: Այլ գործունեություն է համարվում նաև խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով սեփական արտադրանքի իրացումը:

Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեությունը ներառում է խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով (այդ թվում՝ առևտրի իրականացման վայրերում (տոնավաճառ, շուկա և այլն) գտնվող) մանրածախ, մեծածախ և կոմիսիոն առևտուրը:

Առևտրի իրականացման վայրերում (տոնավաճառ, շուկա և այլն) և այդ վայրերից դուրս գտնվող վրանների, շարժական կետերի, վաճառատեղերի (մասնավորապես,՝ սեղանների) և որոշակիորեն առանձնացված համանման այլ տարածքների միջոցով առևտրական գործունեությունը, ինչպես նաև բենզինի, դիզելային վառելիքի և գազի (հեղուկ, բնական) իրացումը (վաճառքը) չի դիտվում որպես խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեություն և գործունեության այդ մասով կիրառվում են այլ գործունեությանը վերաբերող դրույթները (եթե այդ գործունեության տեսակները չեն հարկվում հաստատագրված վճարով):

Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով սեփական արտադրանքի, անավարտ արտադրության, խտտանված արտադրանքի, երկրորդական հումքի, թափոնների և կիսապատրաստուկների, ինչպես նաև գործունեության մեջ չօգտագործված հիմնական միջոցների, արագամաշ առարկաների, հումքի և նյութերի իրացումը (վաճառքը) չի դիտվում որպես խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեություն և գործունեության այդ մասով

կիրառվում են այլ գործունեությանը վերաբերող դրույթները (եթե այդ գործունեության տեսակները չեն հարկվում հաստատագրված վճարով):

**Եկամուտների (իրացման շրջանառության)  
և ծախսերի հաշվառումը**

Հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների (իրացման շրջանառության) և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով:

Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում պարզեցված հարկ վճարողը այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում եկամուտների (իրացման շրջանառության) և ծախսերի հաշվառումն իրականացնում է համապատասխանաբար ելնելով իր կողմից եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Հաշվեգրման եղանակով եկամուտները (իրացման շրջանառությունը) հաշվառելիս պարզեցված հարկ վճարողը հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

- եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է պարզեցված հարկ վճարողին անվերապահ վճարման (հատույման) կամ հարկատու կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս.
- պարզեցված հարկ վճարողի կողմից ծառայություններ մատուցելու դեպքում նշված իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից.
- փոխառության դիմաց եկամուտներ (տոկոսներ) կամ գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ (վարձավճարներ) ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու պահից (եթե պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան):

Այն պարզեցված հարկ վճարողները, որոնք հանդիսանում են պարզեցված հարկ վճարող իրականացնելով կամ չիրականացնելով հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, պարզեցված հարկով հարկվող գործունեությանը ուղղակիորեն չվերաբերվող **այլ եկամուտները**, «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **այլ նվազեցումները** և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված **անձնական նվազեցումը** հաշվի չեն առնում պարզեցված հարկը հաշվարկելիս: Հարկ վճարողները այդ մասով չեն հանդիսանում նաև ընդհանուր կարգով հարկ վճարող:

Պարզեցված հարկ վճարողները այդպիսին համարվելու ժամանակահատվածում հարկման նպատակով պահուստներ չեն ստեղծում և պարտքեր (դեբիտորական, կրեդիտորական) դուրս չեն գրում:

Այլ եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝

- ավանդների և արժեթղթերի ստացվող տոկոսները և այլ հատույունը,
- շահաբաժինները,
- ապահովադիրների կողմից ստացվող ապահովագրական հատույունները,
- անհատույ ստացված գույքը և ծառայությունները (աշխատանքները),
- պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացվող եկամուտները,
- պատճառված վնասի (կրած կորստի) հատույունից ստացվող եկամուտները,
- տուժանքների (տույժեր, տուգանքներ) և գույքային այլ սանկցիաների տեսքով ստացվող եկամուտները,
- Կառավարության սահմանած կարգով դուրս գրված (դուրս գրման ենթակա) անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները, Կառավարության սահմանած կարգով նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարները (դուրս չգրված դեբիտորական պարտքի մարման դեպքում՝ սահմանված կարգով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների գումարները), հաշվետու տարում հայտնաբերված նախորդ տարի-

ներում պակաս ցույց տրված եկամուտները (ավել ցույց տրված ծախսերը):

Պարզեցված հարկ վճարողի գործունեության հետ կապված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը հաշվառվում են այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որում դրանք կատարվել են:

Մինչև պարզեցված հարկի հաշվարկի սահմանված ժամկետներում հարկային մարմին փաստացի ներկայացումը հաշվետու ժամանակաշրջանի համար կատարված ծախսերի վերաբերյալ հիմնավոր փաստաթղթերի առկայության դեպքում ծախսերը հաշվառվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Եթե ծախսերը հիմնավորող փաստաթղթերը ստացվել են պարզեցված հարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց հետո, ապա ծախսերը (էլեկտրաէներգիա, կապ և այլն) հաշվառվում են այդ փաստաթղթերը ստացվելու հաշվետու ժամանակաշրջանում:

Պարզեցված հարկով հարկման նպատակով պարզեցված հարկ վճարողները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում`

- հիմնական միջոցների ամորտիզացիան չեն հաշվարկում և հաշվի չեն առնում, իսկ դրանց գծով կատարված ծախսերը (ձեռք բերում, ստեղծում, ընթացիկ, կապիտալ և այլն) հաշվառվում են այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որում դրանք կատարվել են,
- ոչ նյութական ակտիվների և արագամաշ առարկաների գծով մաշվածք չեն հաշվարկում, իսկ դրանց գծով կատարված ծախսերը (ձեռք բերում, ստեղծում և այլն) հաշվառվում են այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որում դրանք կատարվել են,
- կատարված ծախսերի հաշվառման համար հաշվի չեն առնում օրենսդրությամբ սահմանված նորմաները (սահմանային չափերը)` այդ ծախսերը հաշվառվում են ամբողջ ծավալով,
- ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերի չափով չեն ավելացնում ապրանքների ձեռք բերման արժեքին և այդ ծախսերը հաշվառվում են այդպիսին այդ ապրանքների ձեռք բերման հաշվետու ժամանակաշրջանում,
- տույժերը, տուգանքները և այլ գույքային սանկցիաները (այդ թվում` պետական կամհամայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերը, տուգանքները և այլ գույքային սանկ-

յիաները), օրենքով սահմանված կարգով չհաշվանցված (չհաշվանցվող) անուղղակի հարկերը և փաստաթղթերով հիմնավորված այլ ծախսերը հաշվառում են ամբողջ ծավալով,

- մինչև պարզեցված հարկ վճարող համարվելը Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված և չհաշվանցված հետաձգված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք վճարվել են պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում, հաշվառում են որպես ծախս վճարման հաշվետու ժամանակաշրջանում, իսկ փաստաթղթերով չհիմնավորված այլ ծախսերը հաշվառում են ամբողջ ծավալով:

Եթե առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը միաժամանակ իրականացնում է պարզեցված հարկով և հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, ապա ընդհանուր տնտեսական ծախսերը, որոնք ըստ գործունեության առանձին տեսակների հնարավոր չէ առանձնացնել, պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով չեն հաշվառվում: Ընդհանուր տնտեսական ծախսերն են՝ կառավարման ապարատի աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական նշանակության հիմնական միջոցների նորոգման, պահպանման և շահագործման, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծախսերը):

**Ուշադրություն.** *Անկախ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի հաշվառումից, այդ ծախսերի գծով պարզեցված հարկի գումարից նվազեցումներ չեն կատարվում:*

Պարզեցված հարկ վճարողները այդ գործունեության մասով վառում են եկամուտների և ծախսերի հաշվառում, ինչպես նաև հարկային օրենսդրությանն առնչվող գրանցումներ՝ Կառավարության 12.08.2000թ. «Պարզեցված հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման կարգի մասին» N 471 որոշմամբ սահմանված կարգով: Պարզեցված հարկ վճարողները այդ մասով կարող են չվարել՝

- այլ հաշվառում (այդ թվում՝ հաշվապահական),
- Կառավարության 31.07.1997թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղա-



փոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N 314 որոշմամբ սահմանված առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր,

- Կառավարության 31.07.1997թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N 315 որոշմամբ սահմանված արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր,

Բացառապես պարզեցված հարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունները հարկային մարմիններ ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններ կարող են չներկայացնել:

### **Պարզեցված հարկ վճարողների կողմից այլ հարկերի վճարումը**

Պարզեցված հարկ վճարողների համար այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում պահպանվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում գույքահարկի և հողի հարկի, մաքսային սահմանին գանձվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում այլ պարտադիր վճարների (այդ թվում՝ բնապահպանական և բնօգտագործման վճարներ, պետական տուրքեր, տեղական տուրքեր և վճարներ) հաշվարկման և վճարման կարգը:

Պարզեցված հարկ վճարողների համար իրենց կողմից վճարած (վճարվող) գույքահարկը, հողի հարկը, օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ պարտադիր վճարները (այդ թվում՝ բնապահպանական և բնօգտագործման վճարներ, պետական տուրքեր, տեղական տուրքեր և վճարներ) ներառվում են ծախսերի մեջ:

Պարզեցված հարկ վճարողները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց մատակարարներին վճարած կամ վճարման ենթակա (ինչպես նաև ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններում վճարած կամ վճարման ենթակա) անուղղակի հարկերի գումարները միացնում են այդ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման արժեքին:

Պարզեցված հարկ վճարողները (որպես գործատու) պարտադիր սույիալական ապահովագրության վճարները կատարում են և դրանց գծով հաշվետվությունները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում են «Պարտադիր սույիալական ապահովագրության

վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Պարզեցված հարկ վճարողները սահմանված դեպքերում հանդիսանում են նաև հարկային գործակալ՝ շահութահարկի և եկամտահարկի գծով, ինչպես նաև հաշվարկում և վճարում են ԱԱՀ՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում:

**Ուշադրություն.** Պարզեցված հարկ վճարողները ազատվում են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից (այսինքն՝ առանց հիմնավորող փաստաթղթերի ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս պարզեցված հարկ վճարողները վճարված եկամուտներից չեն հաշվարկում և պետական բյուջե չեն վճարում եկամտահարկ 3% դրույքաչափով):

### **Պարզեցված հարկ վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը**

Պարզեցված հարկ վճարողներն գործունեության այդ մասով իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում չեն կատարում (հարկային հաշիվ դուրս չեն գրում):

Հարկային հաշիվ դուրս գրելու (ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի առանձնացնելու) դեպքում պարզեցված հարկ վճարողները պարտավոր են առանձնացված հարկի գումարը վճարել պետական բյուջե սահմանված կարգով և ժամկետներում՝ առանց այդ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման համար մատակարարներին վճարած ԱԱՀ-ի գումարների մվազեցմամբ:

Հարկային հաշվում նշված գումարը ներառվում է պարզեցված հարկով հարկվող իրացման շրջանառության մեջ՝ առանց պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի:

Պարզեցված հարկ վճարողները, անկախ հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից, որպես այդպիսիք դառնալու պահին նախորդող ժա-

մանակահատվածներում իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող՝ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված, ինչպես նաև մաքսային մարմիններում վճարված (վճարման ենթակա) ԱԱՀ-ի գումարների մնացորդը միացնում են ծախսերին (պարզեցված հարկ վճարող համարվելու առաջին հաշվետու ժամանակաշրջանում):

### **Պարզեցված հարկի հաշվարկի ներկայացման և վճարման կարգն ու ժամկետները**

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում պարզեցված հարկի հաշվարկ:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար պարզեցված հարկի ներկայացված հաշվարկներում հարկ վճարողի կողմից սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում հարկ վճարողը կարող է իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել ճշգրտված հաշվարկներ, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների (այդ թվում՝ տույժերի) վերահաշվարկ:

Հարկային մարմինների կողմից հարկ վճարողների մոտ իրականացվող ստուգումների ընթացքում հարկային օրենսդրությամբ հարկ վճարողի կողմից հարկային մարմիններ ներկայացվող ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող պարզեցված հարկի հաշվարկների ճշգրտում չի իրականացվում (պարզեցված հարկի ճշգրտված հաշվարկներ չեն ներկայացվում): Պարզեցված հարկի ճշգրտված հաշվարկներ չեն ներկայացվում նաև այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որում կատարվել է պարզեցված հարկի գծով բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Ստուգված ժամանակաշրջանի համար պարզեցված հարկի գծով պարտավորությունները կարող են ճշգրտվել միայն հարկ վճարողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Պարզեցված հարկ վճարողները պարզեցված հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ):

Պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպությունները այդպիսին համարվելու ժամանակաշրջանում (անկախ հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնելու հանգաման-

քից) շահութահարկի կանխավճարներ և շահութահարկի նվազագույն գումարի ամսական վճարումներ չեն կատարում:

Եթե առևտրային կազմակերպությունները տարվա ընթացքում հանդիսացել են՝

- պարզեցված հարկ և շահութահարկ վճարող, ապա տվյալ տարվա համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացվող հաշվապահական հաշվետվություններում և փաստացի շահութահարկի հաշվարկներում (ոչ ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները՝ հայտարարագրում) չեն ներառում պարզեցված հարկ վճարող հանդիսանալու ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով ստացված եկամուտները և կատարված ծախսերը,
- պարզեցված հարկ և եկամտահարկ վճարող, ապա տվյալ տարվա համար իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հայտարարագրում չեն ներառում պարզեցված հարկ վճարող հանդիսանալու ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով ստացված եկամուտները և կատարված ծախսերը:

#### **Պարզեցված հարկի գործողության դադարումը**

Պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին հետևյալ փաստերից որևէ մեկի տեղի ունենալու եռամսյակին հաջորդող ամսվա 1-ից, եթե պարզեցված հարկ վճարողը.

- ա) գրավոր դիմում է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին՝ ընդհանուր կարգով հարկման, հաշվառման և հաշվետվությունների համակարգին անցնելու վերաբերյալ.
- բ) այդպիսին համարվելու ժամանակաշրջանում թույլ է տվել ենթակայիզային ապրանքների դրոշմավորման կարգին վերաբերող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի հետևյալ հոդվածների երկու և ավելի խախտման դեպքեր՝
  - սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշներն օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում 1000 հատ (հոդված 170<sup>7</sup>),
  - ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով ապրանքներ դրոշմավորելը, եթե այդ ապրանքների ընդհանուր

արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազար դրամը (հոդված 170<sup>7</sup>),

- ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազար դրամը (հոդված 170<sup>8</sup>),
- ակցիզային դրոշմանիշերի մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված դրոշմանիշերով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազար դրամը (հոդված 170<sup>9</sup>),
- Կառավարության կողմից սահմանված՝ որոշակի թվագրումով դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացման թույլատրելի ժամկետներից հետո այդպիսի ապրանքներ իրացնելը (հոդված 170<sup>12</sup>).

գ) թույլ է տվել 100,0 հազ. դրամ և ավելի ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարի):

**Ուշադրություն.** Այս դրույթը կիրառվում է այն դեպքում, եթե հաշվետու ժամանակաշրջանին (եռամսյակին) հաջորդող առաջին ամսվա 1-ի դրությամբ պարզեցված հարկ վճարողը շարունակում է ունենալ 100,0 հազ. դրամ և ավելի ժամկետանց հարկային պարտավորություններ: Ընդ որում՝ 100,0 հազար դրամ և ավելի ժամկետանց հարկային պարտավորություններ ունեցող պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին նաև այն դեպքում, երբ արձանագրված հարկային պարտավորությունների մասով հարկ վճարողը

*գանգատարկել է հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները (այսինքն՝ արձանագրված հարկային պարտավորությունների գանգատարկումը հաշվի չի առնվում): Այս դրույթը չի կիրառվում հարկ վճարողի մոտ հետազայում կատարված ստուգման արդյունքներով կազմված ակտում արձանագրված խախտումների հետևանքով առաջադրված հարկային պարտավորությունների նկատմամբ:*

Պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին հետևյալ փաստերից որևէ մեկի տեղի ունենալու պահից՝ պարզեցված հարկ վճարողի կողմից այդպիսին համարվելու ժամանակաշրջանում.

ա) իրականացվում է ենթակցիզային (այդ թվում՝ դրան փոխարինող հաստատագրված վճարով հարկվող) ապրանքների արտադրություն.

բ) իրականացվում է բանկերի, գրավատների, վարկային կամ ապահովագրական կազմակերպությունների, ներդրումային հիմնադրամների, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակիցների (արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց՝ բրոքերային (դիլերային) ընկերություններ, արժեթղթերի հավատարմագրային կառավարիչներ, արժեթղթերի պահառուներ և օրենքով սահմանված այլ անձինք), արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի (բացառությամբ՝ գովազդային վիճակախաղերի) կազմակերպիչների գործունեություն.

գ) իրականացվում է իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն (այդ թվում՝ փաստաբանների վարչանու գործունեություն, խորհրդատվություններ իրավաբանական հարցերով, գործունեություն հաշվապահական հաշվառման բնագավառում, աուդիտորական գործունեություն, շուկայի իրավիճակի հետազոտում և հասարակական կարծիքի բացահայտում, խորհրդատվություններ առևտրային գործունեության և կառավարման հարցերով, կազմակերպությունների կառավարմանը վերաբերող գործունեություն)՝ բացառությամբ խորհրդատվական ծառայություններ մատուցող նոտարների, ինչպես նաև հանքագործական արդ-

յունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության գործունեություն.

- դ) հաշվետու ժամանակաշրջանի (եռամսյակի) ընթացքում Հայաստանի Հանրապետություն «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների (որոնց համար ԱԱՀ վճարված չի եղել ներմուծման պահին) ներմուծման ծավալը (հաշվարկված մաքսային արժեքով) գերազանցում է 250,0 հազ. դրամը (այդ փաստի տեղի ունենալու պահը որոշվում է մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագրի կնքման ամսաթվով).

**Ուշադրություն.** Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների համար օրենքով նախատեսված չէ ԱԱՀ-ի գանձում մաքսային մարմինների կողմից, հարկ վճարողները կարող են իրենց կողմից մաքսային մարմիններին ներկայացված դիմումի հիման վրա ներմուծման պահին վճարել այդ գումարը (այն արտացոլվում է մաքսային հայտարարագրում) և սահմանված կարգով շարունակել համարվել պարգեցված հարկ վճարող, ընդ որում՝ մաքսային սահմանին վճարված այդ ԱԱՀ-ի գումարները միացվում են ներմուծված ապրանքների ձեռքբերման արժեքին:

Ապրանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող՝ հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող գույքը (բացառությամբ՝ դրամական միջոցների), որի մեջ ներառվում են հիմնական միջոցները, արագամաշ առարկաները, հումքը և նյութերը:

- ե) հանդիսանում է համատեղ գործունեության պայմանագրի կողմ (նշված փաստի տեղի ունենալու պահը որոշվում է համատեղ գործունեության պայմանագրի մոժի մեջ մտնելու պահից).
- զ) տվյալ տարվա սկզբից ունեցել է պարգեցված հարկով հարկվող 50,0 մլն. դրամից ավելի իրացման շրջանառություն.

**Ուշադրություն.** Այդ դեպքում մինչև 50,0 մլն. դրամը (ներառյալ) իրացման շրջանառությունը հարկվում է պարգեցված հարկով, իսկ 50,0 մլն. դրամը գերազանցող իրացման շրջանառությունը՝ ընդհանուր կարգով (այդ թվում՝ այն դեպքերում, երբ տվյալ

տարվա սկզբից 50,0 մլն. դրամից ավելի իրացման շրջանառության գերազանցումը մեկ գործարքի իրականացման արդյունք է), ինչը պետք է արտացոլվի նաև հարկ վճարողի կողմից դուրս գրվող սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում (այն դեպքում, երբ հնարավոր չէ տարանջատել պարզեցված հարկով և ընդհանուր կարգով հարկվող իրացման շրջանառությունները, տարանջատումը կատարվում է հարկ վճարողի համար առավել բարենպաստ պայմաններով):

**Օրինակ.** Պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպությունը 2006թ. հունվար-փետրվար ամիսներին իրացման շրջանառություն չի ունեցել, իսկ 2006թ. մարտին վաճառել է հիմնական միջոց 56,0 մլն. դրամով: Առևտրային կազմակերպության կողմից դուրս է գրվում հաշիվ-ապրանքագիր (հարկային հաշիվ), որտեղ առանձին տողով նշվում է պարզեցված հարկով հարկվող շրջանառությունը (50,0 մլն. դրամ), ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (5,0 մլն. դրամ) և ԱԱՀ-ի գումարը (1,0 մլն. դրամ): 2005թ. 1-ին եռամսյակի համար պարզեցված հարկը հաշվարկվում է 50,0 մլն. դրամից՝ 5% դրույթաչափով ( $50,0 \times 5\% = 2,5$  մլն. դրամ) և հաշվետու ժամանակաշրջանի համար՝ նաև ԱԱՀ:

- է) տվյալ տարվա որևէ պահին, խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով ունեցել է 15,0 մլն. դրամը գերազանցող՝ իրեն պատկանող սպրանքային մնացորդ (հաշվարկված ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով):

**Ուշադրություն.** Դա վերաբերվում է հարկ վճարողին պատկանող (սեփականության իրավունքով, տնօրինման իրավունքով) խանութում, կրպակում (տաղավարում) և դրանց պահեստներում գտնվող սպրանքային մնացորդին (վաճառքի համար նախատեսված գույքին), ընդ որում՝ կոմիսիոն հիմունքներով վաճառքի համար նախատեսված գույքը ներառվում է սպրանքային մնացորդի մեջ միայն կոմիսիոնատի մոտ: Նշվածը չի վերաբերվում ոչ նյութական ակտիվներին և այն սպրանքներին, որոնք օգտագործվում (սպառվում) են հարկ վճարողի գործունեության ընթացքում կամ իրենց հատկությունները (կամ արժեքը) ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցում են նոր ստեղծված արդյունքին (հիմնական միջոցներ, արագամաշ առարկաներ, հումք և նյութեր, երկրորդական հումք, թափոններ, կիսապատրաս-



տուկներ, անավարտ արտադրանք, խոտանված արտադրանք), ինչպես նաև սեփական արտադրանքին, ի պահ ընդունված գույքին: Այս դրույթի կիրառման առումով՝

- ապրանքային մնացորդի ձեռքբերման գները (ներառյալ՝ Հաստատանի Հանրապետության տարածքում ձեռքբերումների մասով չփոխհատուցվող անուղղակի հարկերը) ձեռքբերման օրը որոշվում են սկզբնական փաստաթղթերից (հաշիվ-ապրանքագիր, invoice, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոն, (միակողմանի) գնման ակտ, ընդունման-հանձնման ակտ և այլն), հաշվառման գրքերից (այդ թվում՝ եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք), պայմանագրերից ելնելով և չեն ներառում ապրանքների ձեռք բերման հետ կապված ծախսերը (տրանսպորտային ծախսեր, սպահովագրական վճարներ, մաքսային սահմանին վճարված անուղղակի հարկերը և այլն): Ապրանքային մնացորդի հետագա ձեռքբերումներին զուգահեռ կատարվում է նույն տեսականու ապրանքային մնացորդի ձեռքբերման գների ճշգրտում՝ վերջին ձեռքբերման գներից ելնելով, որոնք համեմատվում են այդ տեսականու ապրանքային մնացորդի վերջին վաճառքի գների հետ և ընդունվում են առավելագույն գները, որոնց հիման վրա վերջին ձեռքբերման օրվանից վերահաշվարկվում է ապրանքային մնացորդը:
- ապրանքային մնացորդի սկզբնական վաճառքի գները որոշվում են վաճառքի օրը՝ սկզբնական փաստաթղթերից (հաշիվ-ապրանքագիր, invoice, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոն, ընդունման-հանձնման ակտ և այլն), հաշվառման գրքերից (այդ թվում՝ եկամուտների և ծախսերի հաշվառման գիրք), պայմանագրերից: Վաճառքի գները հաշվարկվում են չվաճառված նույն տեսականու ապրանքային մնացորդի համար, որոնք համեմատվում են այդ տեսականու ապրանքային մնացորդի վերջին ձեռքբերման գների հետ և ընդունվում են առավելագույն գները, որոնց հիման վրա վաճառքի օրվանից վերահաշվարկվում է ապրանքային մնացորդը: Ապրանքային մնացորդի հետագա վաճառքներին զուգահեռ կատարվում է չվաճառված նույն տեսականու ապրանքային մնացորդի վաճառքի գների ճշգրտում՝ վերջին վաճառքի գներից ելնելով, որոնք համեմատվում են այդ տեսականու ապրանքային մնացորդի վերջին ձեռքբերման գների հետ և ընդունվում են առավելագույն գները, որոնց հիման վրա վերջին վաճառքի օրվա-

նից վերահաշվարկվում է ապրանքային մնացորդը: Վաճառքից տարբերվող այլ օտարումների (անհատույց տրամադրում, դուրս գրում, կորուստ և այլն) դեպքում այդ տեսականու վաճառքի գները չեն փոփոխվում (ճշտվում են միայն չօտարված ապրանքային մնացորդները):

- վաճառքի օրը ապրանքային մնացորդը հաշվարկվում է երկու եղանակով՝ մինչև վաճառքը ապրանքային մնացորդի ձեռքբերման և նախորդ վաճառքի գների առավելագույնով (առաջին եղանակ) ու վաճառքից հետո չվաճառված ապրանքային մնացորդի նկատմամբ ձեռքբերման և նոր վաճառքի գների առավելագույնով (երկրորդ եղանակ)՝ երկու եղանակներով հաշվարկված ապրանքային մնացորդներից ընդունվում է առավելագույնը.
- ձեռքբերված ապրանքային մնացորդը նույն օրը վաճառելու դեպքում ձեռքբերված ամբողջ ծավալը հաշվարկվում է ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով.
- վաճառված հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները և արագամաշ առարկաները, եթե գործունեության մեջ չեն օգտագործվել (շահագործման չեն հանձնվել), ներառվում են ապրանքային մնացորդի մեջ ձեռքբերման (բայց ոչ շուտ, քան պարզեցված հարկ վճարող համարվելու) օրվանից սկսած՝ ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով.
- վաճառված հումքը և նյութերը (բացառությամբ՝ երկրորդական հումքի և թափոնների) ներառվում են ապրանքային մնացորդի մեջ ձեռքբերման (բայց ոչ շուտ, քան պարզեցված հարկ վճարող համարվելու) օրվանից սկսած՝ ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով.
- այն դեպքում, երբ անհնար է որոշել ապրանքային մնացորդի ձեռքբերման և (կամ) վաճառքի գները (այդ թվում՝ գույքագրման արդյունքում), ապա ապրանքային մնացորդը հաշվարկվում է հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված մոտեցումները:

Եթե հարկ վճարողը պարզեցված հարկ վճարող լինելու դադարեցման հիմքերի առկայության դեպքում շարունակում է համարել իրեն պարզեցված հարկ վճարող, ապա այդ փաստը ստուգմամբ հայտնա-

բերվելու դեպքում հարկերը հաշվարկվում են օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Այդ դեպքում հարկ վճարողի կողմից հաշվարկված պարզեցված հարկի գումարները հաշվանցվում են ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված շահութահարկից (եկամտահարկից) և ԱԱՀ-ից (ԱԱՀ-ով հարկվող գործունեության տեսակների մասով՝ 40% և 60% համամասնությամբ):

### **Պարզեցված հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելը**

Պարզեցված հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելու պահից՝

- տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում հարկ վճարողները շահութահարկը (եկամտահարկը), այդ թվում՝ կանխավճարները և ԱԱՀ-ը հաշվարկում և վճարում են օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով,
- ԱԱՀ-ով հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից չեն հաշվանցվում պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում մատակարարների հարկային հաշիվներում, ինչպես նաև մաքսային մարմիններում վճարված (վճարման ենթակա) առանձնացված ԱԱՀ-ի գումարները,
- ստացվող եկամուտներից չեն նվազեցվում պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում հարկ վճարողների կողմից կատարված ծախսերը,
- նախորդ տարիների ընթացքում ստացած վնասը կարող են նվազեցնել հարկման ընդհանուր կարգին անցնելուց հետո գործունեությունից ստացված համախառն եկամտից, իսկ պարզեցված հարկով հարկման ժամանակաշրջանում ստացած վնասը ենթակա չէ նվազեցման:

**Ուշադրություն.** *Վնասի չափով նվազեցման կիրառման նպատակով հաշվետու և նախորդող տարիներին հարկ վճարողի գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ (ներառյալ՝ պարզեցված հարկով հարկվող ժամանակահատվածը):*

Առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը նախորդ (ընդհանուր կարգով հարկվող) տարիների ընթացքում կա-

տարված ուղղակի ծախսերը, որոնք չեն նվազեցվել ընդհանուր կարգով հարկվող ժամանակահատվածում, պարզեցված հարկով հարկման դադարեցման պահից ենթակա են նվազեցման հարկման ընդհանուր կարգին անցնելու ժամանակահատվածում ստացված եկամուտների՝ ընդհանուր սահմանված կարգով:

## 2. ԸԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ

---

Ի տարբերություն պարզեցված հարկի, որտեղ հարկ վճարողը, եթե բավարարում էր սահմանված պահանջներին, իր ցանկությամբ էր ընտրում հարկման այդ կարգը, օրենսդրությամբ սահմանված առանձին գործունեության տեսակներ իրականացնելիս (անկախ հարկ վճարողի ցանկությունից) պարտադիր կիրառվում է հաստատագրված վճարների հարկման կարգը:

Հաստատագրված վճարը պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ին և շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող պարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է օրենսդրությամբ նախատեսված գործունեության որոշ տեսակների իրականացման ժամանակ: Հաստատագրված վճար վճարողների համար կասեցվում են ԱԱՀ-ի և շահութահարկի (եկամտահարկի) գծով հարկային օրենսդրությամբ սահմանված արտոնությունները:

Հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ (ԱԱՀ-ով հարկվող գործունեության մասով) շահութահարկի (եկամտահարկի) հաշվարկային մեծությունն ընդունվում է 40%, իսկ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը՝ 60%:

Հաստատագրված վճար վճարողներն (անկախ հաստատագրված վճարներ կատարելու հանգամանքից)՝

- պարտավոր են հաշվարկել և բյուջե փոխանցել օրենսդրությամբ սահմանված այլ հարկերն ու պարտադիր վճարները,
- օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել հարկային գործակալի պարտականություն,
- վարել հաշվառում (այդ թվում՝ հաշվապահական) և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մար-

մին ներկայացնել հաշվապահական հաշվետվություններ, հարկային հաշվարկներ, հայտարարագրեր և օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր և տեղեկություններ (այն դեպքում, երբ հաստատագրված վճար վճարողներն իրականացնում են բացառապես հաստատագրված վճարներով հարկվող օբյեկտ համարվող գործունեություն, ապա այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում հարկային մարմին շահութահարկի և ԱԱՀ-ի հաշվարկներ չեն ներկայացնում),

- վարել Կառավարության 31.07.1997թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N 314 որոշմամբ սահմանված առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր,
- վարել Կառավարության 31.07.1997թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) մասին» N 315 որոշմամբ սահմանված արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր,
- գործունեության յուրաքանչյուր տեսակի գծով վարում են առանձնացված հաշվառում, որի հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված համախառն եկամուտը, ինչպես նաև այդ գործունեությունների հետ կապված ծախսերը, հարկման նպատակով նվազեցվում են նույն ժամանակաշրջանում այդ գործունեության տեսակներից ստացված համախառն եկամտի և դրանց հետ կապված ծախսերի գումարի չափով (առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում և հայտարարագրերում),
- ապրանքների և ծառայությունների դիմաց մատակարարներին (ինչպես նաև ներմուծման ժամանակ մաքսային մարմիններում) վճարված ԱԱՀ-ի գումարները միացնում են այդ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման արժեքին (ծախսերին),
- իրենց կողմից առաքվող, տրամադրվող, վաճառվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) գծով գնորդներին (ծառայություններից օգտվողներին) դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր՝ օրենսդրությամբ սահմանված կարգով (հաշ-

վարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ առանձնացված նշում չի կատարվում (հարկային հաշիվ դուրս չի գրվում), իսկ հարկի գումարի առանձնացման դեպքում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է սահմանված ընդհանուր կարգով՝ անկախ հաստատագրված վճարների կատարումից)։

### **Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակներն են՝**

- 30մ<sup>2</sup> մակերեսի ոչ ավելի առևտրական մակերես ունեցող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը (ներկայումս գործող օրենսդրության համաձայն հաստատագրված վճարով հարկվում են միայն Երևան քաղաքում 7մ<sup>2</sup>, այլ վայրերում՝ 10մ<sup>2</sup> առևտրական տարածքը չգերազանցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը և բնակելի տարածքի անմիջական վաճառքը),
- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը,
- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը,
- ավտոտրանսպորտային գործունեությունը,
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը,
- լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունը՝ մինչև 01.07.2006թ. (01.07.2006թ.-ից հետո այդ գործունեության տեսակով զբաղվող հարկ վճարողները հարկերը հաշվարկելու և վճարելու են սահմանված կարգով),
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը,
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեությունը,
- ավտոկանգառների գործունեությունը,
- արդյունագործական ձկնորսության գործունեությունը,
- խաղատների գործունեության կազմակերպումը,
- դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործումը,

- համակարգչային խաղերի կազմակերպումը,
- տեսամագնիտոֆոնների և տեսաժապավենների վարձույթը,
- վիճակախաղերի կազմակերպումը,
- բաղնիքների և ցնցուղարանների կազմակերպումը,
- ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը,
- բիլիարդ խաղի կազմակերպումը:

### **Հարկման բազան**

Հաստատագրված վճարի համար հարկման բազա է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալը՝ դրամական արտահայտությամբ:

### **Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հաշվառումը**

Մինչև հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնելը (սկսելը) հարկ վճարողները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին 2 օրինակից ներկայացնում են սահմանված ձևի հայտարարություն՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ: Հարկային մարմնի կողմից հաշվառվելուց և կնքվելուց հետո հայտարարության մեկ օրինակը վերադարձվում է վճարողին: Վերջինս այդ օրինակը փակցնում է գործունեության իրականացման վայրում առավել տեսանելի տեղում: Հետագայում, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը վճարողների կողմից պարտադիր ներկայացվում է վերագրանցման հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում (բացառությամբ՝ գործունեության որոշ տեսակների համար սահմանված դեպքերի):

Ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների (բացառությամբ՝ գործունեության դադարեցման (ներառյալ՝ ժամանակավոր) դեպքում վճարողն այդ մասին գրավոր տեղեկացնում է իր հաշվառման վայրի հարկային մարմնին՝ նոր հայտարարություն (2 օրինակից) ներկայացնելու միջոցով: Նախկին հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից:

Գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում վճարողն այդ մասին գրավոր դիմում-հայտարարություն տալու միջոցով նախապես տեղեկացնում է իր հաշվառման վայրի հարկային մարմնին՝

նշելով դադարեցման ժամանակահատվածը: Դիմում-հայտարարության մեջ գործունեության դադարեցման ժամանակահատվածը նշված չլինելու դեպքում գործունեությունը վերսկսելիս վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է հարկային մարմնին՝ ներկայացնելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն: Նախկին հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից:

Գործունեության դադարեցման (կասեցման) դեպքում վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է հարկային մարմնին՝ վերադարձնելով իր մոտ առկա հայտարարությունը կամ ինքնուրույն ոչնչացնելով այն:

Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին են ներկայացնում նաև սահմանված ձևի այլ տեղեկություններ:

### **Հաստատագրված վճարի չափի որոշումը**

Հաստատագրված վճարի չափը որոշում է հաստատագրված վճար վճարողը կամ հարկային մարմինը: Հարկային մարմինը հաստատագրված վճարի չափը որոշում է նոր հայտարարություն չներկայացնելու և հաստատագրված վճարի մեծությունը չհիմնավորված լինելու դեպքում:

Հարկային մարմնին նոր հայտարարություն չներկայացնելու դեպքում յուրաքանչյուր ամսվա համար հաստատագրված վճարի չափը հաշվարկվում է հարկային մարմնի կողմից՝ նախորդ ամսվա հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք ընդունված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների կիրառմամբ (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ ճշգրտվում է հաստատագրված վճարի չափը):

Հաստատագրված վճարի (հարկային պարտավորության) մեծությունը համարվում է չհիմնավորված, և հարկային մարմնի կողմից կատարվում է հաստատագրված վճարի մեծության հաշվարկում (զննատուում), եթե՝

- ա) վճարողի կողմից սահմանված կարգով համապատասխան ժամանակաշրջանի համար ներկայացված ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների մեծությունը ցածր է հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների (ուսումնասիրությունների) արդյունքում արձանագրված հաստատագրված վճարի ելակետային տվյալների կամ ուղղիչ գործա-



կիցների փաստացի մեծությունից: Այս դեպքում հարկային մարմինն այն հաշվարկում է՝ հիմք ընդունելով ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը (բացառությամբ՝ ամսվա մեջ աշխատած օրերի թվի): Ամսվա ընթացքում վճարողի փաստացի աշխատած օրերի թիվը հայտարարված օրերի թվից ավելի լինելու դեպքում այն ընդունվում է ամսվա օրացույցային օրերի թվին հավասար՝ վերջին (նախորդ) ելակետային տվյալների ներկայացման օրվանից հաշված.

- բ) վճարողի կողմից սինչև գործունեության փաստացի (վեր)սկսելը սահմանված կարգով չեն ներկայացվել հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը: Այս դեպքում հարկային մարմինն այն հաշվարկում է՝ հիմք ընդունելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը (բացառությամբ՝ ամսվա մեջ աշխատած օրերի թվի): Ամսվա ընթացքում վճարողի փաստացի աշխատած օրերի թիվն ընդունվում է ամսվա օրացույցային օրերի թվին հավասար՝ վճարողի հաստատագրված վճարով հարկվող գործունեության փաստացի (վեր)սկսման օրվանից հաշված, իսկ գործունեության փաստացի սկսման օրվա վերաբերյալ այլ հավաստի տեղեկությունների (տվյալների) բացակայության դեպքում՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների պարտադիր վերագրանցման ենթակա օրվանից հաշված:

**Ուշադրություն.** Նշված խախտումների դեպքում վճարողից գանձվում է տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի 50%-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո 1 տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն արձանագրելու դեպքում տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի գումարի չափով: Վճարողները այդ տուգանքները բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո 10-օրյա ժամկետում:

## **Հանրային սննդի ոլորտում հաստատագրված վճարի հաշվարկումը**

### **Ո՞րն է համարվում հանրային սննդի ոլորտում գործունեություն**

Հանրային սննդի ոլորտում գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը: Խոհարարական արտադրանք է համարվում կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսաֆաբրիկատների համախումբը:

### **Ովքե՞ր են վճարողները**

Վճարողներ են համարվում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող անձինք (ներառյալ՝ այն դեպքերում, երբ գործունեությունն իրականացվում է այլ անձանց կողմից՝ առանց այդ սրահ(ներ)ի մատվ անշարժ գույքի պետական գրանցման):

Սահմանված կարգով վարձակալած (անշարժ գույքի հետ կապված իրավունքները ձևակերպած) հանրային սննդի սպասարկման սրահում գործունեություն իրականացնելու դեպքում հաստատագրված վճար վճարողներ են համարվում վարձակալները:

Հանրային սննդի կազմակերպումը մի քանի վայրերում իրականացնելու դեպքում հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր վայրի համար առանձին և յուրաքանչյուր օբյեկտի համար հարկային մարմիններին ներկայացվում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ առանձին հայտարարություն:

**Ուշադրություն.** Հանրակրթական դպրոցների, պրոֆտեխնիկական ուսումնարանների, միջնակարգ մասնագիտական և ԲՈՒՀ-երի շենքերում տեղադրված հանրային սննդի գործունեության իրականացման օբյեկտները՝ սովորողներին (դպրոցականներին, ուսանողներին) և աշխատավորական կոլեկտիվի անդամներին մատուցված հանրային սննդի ծառայությունների մատուցման հանդիսանում հաստատագրված վճար վճարողներ:

Հանրային սննդի ոլորտում իրականացվող արտադրական գործունեության համար հարկերը հաշվարկվում են ընդհանուր կարգով:

### **Հաստատագրված վճարի չափը**

Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների արտադրյալի 2000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

**Հաստատագրված վճար =**

**= Ելակետային տվյալ × Ուղղիչ գործակից × 2000**

## **Ելակետային տվյալները**

Հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը (մ<sup>2</sup>): Արտաքին բուֆետների (շարժական և հատուկ սարքավորումներով խոհարարական արտադրանքի պատրաստմամբ և սպասարկմամբ զբաղվող) և սպասարկման սրահ չունեցող այլ վայրերի համար սպասարկման մակերեսն ընդունվում է 20մ<sup>2</sup>:

Հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը, քառակուսի մետրերով արտահայտված, պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված, հատուկ կահավորված այն տարածքն է, որը ներառում է սպառողների կողմից պատրաստի խոհարարական արտադրանքի սպառման և հանրային սննդի գործունեության իրականացման վայրում նրանց ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածքները (բեմահարթակների, պարահրապարակների, առանձնասենյակների և այլն):

Բացօթյա վայրում հանրային սննդի գործունեություն իրականացնելու դեպքում սպասարկման ընդհանուր մակերես է համարվում՝

- որևէ կերպ սահմանազատված (պատ, պարիսպ, ցանկապատ, հարթակ կամ համանման այլ ձևերով) տարածքի, կամ՝
- ծայրամասային (եզրային) սեղանների, տաղավարների կամ համանման ժամանակավոր այլ կառույցների (ներառյալ դրանցում մեկ կամ քանի սեղաններ ներառող), ինչպես նաև այլ օժանդակ կառույցների (խոհանոց, հաճախորդների ժամանցի համար նախատեսված կառույցների (հարթակներ, խաղահրապարակներ, շատրվաններ և այլն) եզրակետերով տարված առավելագույն շրջագծում ընդգրկվող տարածքի՝

մակերեսներից առավելագույնը:

Բացօթյա վայրում 2 և ավելի հարթակների (կառույցի հարկերի) վրա կամ միաժամանակ՝ սահմանազատված և չսահմանազատված տարածքներում հանրային սննդի գործունեություն իրականացնելու դեպքում՝ որպես սպասարկման սրահի մակերես ընդունվում է յուրաքանչյուր հարթակի համար բացօթյա վայրերի համար նույն կարգով որոշված մակերեսների հանրագումարը:

Եռանյակի ընթացքում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի ելակետային տվյալ հանդիսացող սպասարկման մա-

կերեսի փոփոխության դեպքում սահմանային չափի գերազանցումը հաշվարկելիս եռամսյակի համար հիմք է ընդունվում միջին ամսական սպասարկման մակերեսը:

### **Ուղղիչ գործակիցները**

- ա) բացօթյա վայրերի համար տարածքի օգտագործման գործոնի հետ կապված՝ 0.7.
- բ) բար-վարիետենների, բեմական ցուցադրումներ ունեցող հանրային սենդի ալլ վայրերի (օբյեկտների), ինչպես նաև գիշերային ժամերին (24<sup>00</sup>-ից մինչև 6<sup>00</sup>-ը) աշխատող բարերի համար լրացուցիչ՝ 2.0: Լացուցիչ ուղղիչ գործակիցը կիրառվում է բար-վարիետենների նկատմամբ, ինչպես նաև հանրային սենդի վայրի (օբյեկտի) այն սպասարկման սրահի նկատմամբ, որտեղ իրականացվում (նախատեսվում) են հետաապար (ստրիպտիզ) և անհատական կամ համութային համանման ալլ ցուցադրումներ: Նշված լրացուցիչ ուղղիչ գործակիցը կիրառվում է նաև այն բարերի համար, որոնց աշխատանքի տևողության որկից է հատվածը ներառվում է 24<sup>00</sup>-ից մինչև 6<sup>00</sup>-ը ընկած ժամանակահատվածում.
- գ) սպառողների սահմանափակ քանակակազմ ունեցող վայրերի (օբյեկտների) համար՝ 0.5: Այս ուղղիչ գործակիցը կիրառվում է այն դեպքում, երբ տվյալ վայրում (օբյեկտում) հանրային սենդի սպասարկումը իրականացվում է բացառապես կազմակերպության աշխատանքային կոլեկտիվի անդամներին.
- դ) բացօթյա վայրերի համար ապրիլ-հոկտեմբեր ամիսներին լրացուցիչ կիրառվում է 1.5 գործակից.
- ե) հանրային սենդի գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) զբաղեցրած սպասարկման սրահ(ներ)ի մակերեսի հետ կապված՝ մինչև 50 մ<sup>2</sup> - 0.75, մինչև 300 մ<sup>2</sup> - 1.0, մինչև 500 մ<sup>2</sup> - 300 մ<sup>2</sup> գերազանցող մակերեսի համար լրացուցիչ 0.6, 500 մ<sup>2</sup>-ից ավելի՝ 500 մ<sup>2</sup> գերազանցող մակերեսի համար՝ լրացուցիչ 0.3.
- զ) Գեղարքունիքի մարզում (բացի հուլիս և օգոստոս ամիսներից), Սյունիքի, Վայոյ ձորի, Շիրակի, Լոռու, Տավուշի մարզերում գտնվող հանրային սենդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար լրացուցիչ՝ 0.7, իսկ այդ մարզերի գյուղերի վարչական տարածքներում գտնվող հանրային

սննդի գործունեության իրականացման վայրերի (օբյեկտների) համար լրացուցիչ՝ 0.5:

Արտաքին բուֆետների միջոցով հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար, անկախ վերջիններիս բացօթյա լինելու կամ չլինելու հանգամանքից, բացօթյա վայրերի համար նախատեսված ուղղիչ գործակիցներ չեն կիրառվում:

Արտաքին բուֆետների, որոնց սպասարկման մակերեսը ընդունվում է 20մ<sup>2</sup>, հաստատագրված վճարները հաշվարկելիս հանրային սննդի գործունեության իրականացման վայրի (օբյեկտի) գրադեցրած սպասարկման սրահ(ներ)ի մակերեսի (50մ<sup>2</sup> չգերազանցելու) հետ կապված լրացուցիչ ուղղիչ գործակիցը չի կիրառվում:

**Ուշադրություն.** *Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար նախատեսված է սահմանային չափ՝ հարկ վճարողների կողմից 1մ<sup>2</sup> հաշվով եռամսյակի սպրանքաշրջանառության ծավալը 200,0 հազ. դրամը գերազանցելու դեպքում հաշվետու եռամսյակի համար հարկերը վճարում են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Վճարված (հաշվարկված) հաստատագրված վճարների գումարը հաշվանցվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով: Հաշվանցումն առաջին հերթին իրականացվում է ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված փաստացի շահութահարկի և ԱԱՀ-ի գումարների դիմաց՝ 40% և 60% համամասնությամբ:*

*Սահմանային չափերի համապատասխան ցուցանիշների մասին յուրաքանչյուր ամսվա արդյունքներով հայտարարությունը վճարողները ներկայացնում են մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը (ներառյալ):*

Գործունեության կատեգորիան (ժամանակավոր դադարեցման) վերաբերյալ, իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին վճարողները ներկայացնում են դիմում և դիմումի հետ վերադարձնում են նաև ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության իրենց օրինակը: Այն դեպքերում, երբ գործունեության ժամանակավորապես դադարեցման դիմումում նշված ողջ ժամանակահատվածը գտնվում է այն ժամանակահատվածում, որի համար վճարողի կողմից սահմանված կարգով արդեն իսկ ներկայացված է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը,

ապա գործունեությունը վերսկսելիս վերջինիս հարկային մարմնի կողմից ետ է վերադարձվում ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ վճարողի օրինակը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակնկալվում են ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փոփոխություններ:

Այն դեպքերում, երբ ժամանակավոր դադարեցման (գործունեության կասեցման) ժամանակահատվածը իր մեջ ներառում է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների պարտադիր (վերա)գրանցման ժամկետ(ներ), ապա ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների պարտադիր (վերա)գրանցման ժամկետը համարվում է գործունեության փաստացի վերսկսման նախորդ օրը:

### **Վարսավիրանոցներում հաստատագրված վճարի հաշվարկումը**

Վարսավիրանոց է համարվում վարսավիրական ծառայության նպատակին հարմարեցված հատուկ աշխատատեղի (աշխատատեղերի) համար առանձնացված մշտական կամ ժամանակավոր շինությունը: Վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղ է համարվում այդ նպատակի համար համապատասխան սարքավորումներով յուրաքանչյուր հատուկ կահավորված տեղը:

**Ուշադրություն.** *Վարսավիրական ծառայության մատուցման աշխատատեղեր չեն հանդիսանում վարսավիրանոցներում գտնվող (տեղաբաշխված) եղունգների խնամքի, դիմահարդարման, մերսման և նման այլ ծառայությունների մատուցման հատուկ աշխատատեղերը: Այդ ծառայությունների հարկումը կատարվում է ընդհանուր կարգով:*

#### **Ուվքեր<sup>Ը</sup> են վճարողները**

Վճարողներ են համարվում վարսավիրական ծառայության մատուցման գործունեություն կազմակերպողները:

#### **Հաստատագրված վճարի չափը**

Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակիցի արտադրյալի 500-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

**Հաստատագրված վճար =**

$$= \text{Ելակետային տվյալ} \times \text{Ուղղիչ գործակից} \times 500$$

### **Ելակետային տվյալները՝**

- ա) վարսավիրական ծառայության աշխատատեղերի քանակը.
- բ) ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերը և դրանց թիվը:

### **Ուղղիչ գործակիցները՝**

Երևան քաղաքի համար	1.0,
այլ վայրերի համար	0.6,
մարզկենտրոնների, Աբովյան և Վաղարշապատ քաղաքների համար	0.8:

## **3. ՀՍԿԻՉ-ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

---

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների, օտարերկրյա կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների և անհատ ձեռնարկատերերի (բացառությամբ՝ Կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի (ներառյալ՝ դուստր բանկերի), դրանց մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գործառնական գրասենյակների (կետերի), օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, վարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց՝ այդ գործունեության մասով, ֆոնդային բորսաների և Կենտրոնական դեպոզիտարիայի) կողմից մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ-ներ) կիրառումը պարտադիր է՝

**ա) 2005 թվականի հունվարի 1-ից գործունեության հետևյալ ոլորտների համար՝**

- խաղատների և շահումով խաղերի կազմակերպում,
- բաղնիքների և ցնցողարանների կազմակերպում,
- ստացիոնար տեղակայված լիցքավորման կայաններում (կետերում) բենզինի, դիզելային վառելիքի և բնական ու հեղուկ գազի վաճառք,
- խանութների և տաղավարների (բացառությամբ՝ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված հեռավոր, սահմանամերձ, (բարձր)լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում գտնվող խանութների և տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեություն,
- Երևան քաղաքում 7 մ<sup>2</sup>, իսկ այլ վայրերում 10 մ<sup>2</sup> գերազանցող ընդհանուր մակերես ունեցող կրպակների (բացառությամբ՝ գյուղական բնակավայրերում գտնվող) միջոցով իրականացվող առևտրական գործունեություն,
- հյուրանոցային ծառայությունների մատուցում,
- սպասարկման սրահ ունեցող օբյեկտներում հանրային սննդի կազմակերպում,
- դեղատնային գործունեություն,
- վերգետնյա տրանսպորտային միջոցներով (ավտոկրպակներ, մոտոկրպակներ, ավտոսայլակներ, մոտոսայլակներ, կյորդներ, կիսակյորդներ և համանման այլ շարժական կետեր) իրականացվող մանրածախ առևտրի (բացառությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքի, թերթերի, ամսագրերի, լյնովի գարեջրի, կվասի, կաթի, թանի, կերոսինի, բենզինի և դիզելային վառելիքի, հեղուկ գազի վաճառքի) գործունեություն.

**բ) 2005 թվականի ապրիլի 1-ից գործունեության հետևյալ ոլորտների համար՝**

- Երևան քաղաքի տարածքում գտնվող առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդեսավաճառքի անցկացման վայրերում) կրպակներից, վրաններ-



րից և ապրանքների ցուցադրումն ու պահպանումն ապահովող կահավորված այլ վաճառատեղերից, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերի մշտական շինություններում վաճառատեղաններից ապրանքների (բացառությամբ՝ գյուղատնտեսական արտադրանքների և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի) վաճառք,

- մարզաառողջարարական համալիրների, հանգստյան տների կազմակերպում,
  - հիվանդանոցների և ամբուլատոր բուժօգնականների կողմից ծառայությունների մատուցում,
  - գեղեցկության սրահների կազմակերպում,
  - արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն.
- զ) 2007 թվականի հոկտեմբերի 1-ից գործունեության հետևյալ ոլորտների համար՝
- Երևան քաղաքում 7մ<sup>2</sup>, իսկ այլ վայրերում (բացառությամբ՝ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված հեռավոր, սահմանամերձ, (բարձր)լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի) 10մ<sup>2</sup> չգերազանցող ընդհանուր մակերես ունեցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեություն,
  - Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված հեռավոր, սահմանամերձ, (բարձր)լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում գտնվող խանութների, տաղավարների և 10մ<sup>2</sup> գերազանցող ընդհանուր մակերես ունեցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեություն.
- դ) 2010 թվականի հունվարի 1-ից պարտադիր է Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված հեռավոր, սահմանամերձ, (բարձր)լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում գտնվող մինչև 10մ<sup>2</sup> ընդհանուր մակերես ունեցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար.
- ե) 2006 թվականի հուլիսի 1-ից՝ այլ ոլորտների համար:

Կառավարության կողմից հեռավոր, սահմանամերձ, (բարձր)լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի ցանկը սահմանված է 14.07.2005թ. N 1017-Ն որոշմամբ:

**Ուշադրություն.** Կանխիկ դրամով դրամական հաշվարկներ կատարելիս ՀՂՄ-ների կիրառումը պարտադիր չէ՝

- ա) բնակչությանը կոմունալ ծառայությունների մատուցման, պայմանով, որ դրանց դիմաց կանխիկ դրամով դրամական հաշվարկներ իրականացնելիս վճարողին տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով վճարումը հավաստող փաստաթուղթ.
- բ) կրպակներում թերթերի և ամսագրերի վաճառքի, պայմանով, որ թերթերի և ամսագրերի իրացման տեսակարար կշիռը գերազանցում է ապրանքաշրջանառության ծավալի 50 տոկոսը: Թերթերի և ամսագրերի իրացումից հասույթի հաշվառումն իրականացվում է առանձնացված կարգով.
- գ) վիճակախաղի տոմսերի վաճառքի.
- դ) ավտոմոբիլային, ջրային, երկաթուղային, օդային տրանսպորտով երթևեկելու համար երթևեկության տոմսերի վաճառքի.
- ե) ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդով ապահովման.
- զ) առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) գտնվող բաց վաճառատեղաններից գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառքի.
- է) ձեռքի սայլակներից, զանբյուղներից, արկղերից (ներառյալ՝ մթնոլորտային տեղումներից պոլիէթիլենային թաղանթով կամ այլ նյութերով պաշտպանված) պարենային և ոչ պարենային ապրանքների (բացառությամբ՝ այնպիսի ապրանքների, որոնք պահանջում են պահպանման և վաճառքի հատուկ պայմաններ) շրջիկ և շրջածախ մանրածախ վաճառքի.
- ը) գյուղական բնակավայրերի մանկաբարձական-բուժական կենտրոնում գտնվող դեղատներից դեղանյութերի վաճառքի.
- թ) կրպակներից ոչ ոգելից խմիչքների լցնովի վաճառքի.

- ժ) բուսական յուղի և կշռովի բանջարաբուստանային մշակաբույսերի, ինչպես նաև ցիստեռններից (տակառներից) լցնովի գարեջրի և կվասի վաճառքի.
- ժա) սահմանված կարգով գրանցված կրոնական կազմակերպությունների կողմից կրոնական պարագաների իրացման և կրոնական ծիսակատարությունների ծառայությունների մատուցման.
- ժբ) փոստային ծառայությունների դիմաց վճարումը հավաստող փոստային վճարման պետական նշանների (փոստային նամականիշերի և այլ նշանների) անվանական արժեքով իրացման.
- ժգ) նոտարական և փաստաբանական ծառայությունների իրականացման.
- ժդ) փոստային և սուրհանդակային գործունեության իրականացման.
- ժե) փորձագիտական բնագավառում գիտահետազոտական, գիտատեխնիկական և գիտամեթոդական աշխատանքների իրականացման:

Հայաստանի Հանրապետությունում ՀԳՄ-ների պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպությունները կանխիկ դրամով դրամական հաշվարկները, բացառությամբ բանկային հաշիվների միջոցով կատարողների, պետք է իրականացնեն՝

- ա) Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության թույլատրած ՀԳՄ-ներով.
- բ) Կառավարության 26.08.2004թ. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով հարկային տեսչության կողմից գրանցված և կապարակնքված ՀԳՄ-ների միջոցով.
- գ) ՀԳՄ-ների մոդելին ներկայացվող պարտադիր տեխնիկական պահանջները բավարարող ՀԳՄ-ներով.
- դ) դրամական միջոցների պատշաճ հաշվառումը (վերահսկողական ժապավենի և ֆիսկալային հիշողության ֆիքսումը) ապահովող ՀԳՄ-ներով:

Արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային առքովաճառքի գործունեություն իրականացնողները դրամական հաշվարկները պետք է իրականացնեն թվարկված պահանջները բավարարող ՀԳՄ-ով կամ դրան համարժեք (նույն պահանջները բավարարող) համակարգչային սարքավորումներով (ՀԳՄ-ի, համակարգչային սարքավորումների, ինչպես նաև համակարգչային ծրագրի կիրառման թույլ-

լատրումն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով Կառավարության լիազորած պետական մարմնի և հարկային մարմնի հետ):

### **Պատասխանատվությունը**

ՀԳՄ-ների կիրառումը պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում ՀԳՄ-ի բացակայության համար կազմակերպությունը տուգանվում է 150,0 հազ. դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո 1 տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը տուգանվում է 300,0 հազ. դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով ՀԳՄ-ի ներդրումը:

ՀԳՄ-ների գրանցման կարգի կամ շահագործման կանոնների խախտմամբ (ՀԳՄ-ների շահագործման կանոնները սահմանված են Կառավարության 26.08.2004թ. N 1325-Ն որոշմամբ) ՀԳՄ-ի կիրառման համար կազմակերպությունը տուգանվում է 75,0 հազ. դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ 1 տարվա ընթացքում խախտումը առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը տուգանվում է 150,0 հազ. դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում:

Տուգանքը նշանակելուց հետո՝ 1 տարվա ընթացքում խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը տուգանվում է 300,0 հազ. դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում:

Գործունեության կասեցումն իրականացվում է՝ Հարկային Պետական Ծառայության պետի համապատասխան որոշման հիման վրա:

**Ուշադրություն.** *Տուգանքները՝ խախտման փաստն արձանագրելուց հետո 2-ամսյա ժամկետում չմոծելու դեպքում, կրկնապատկվում են:*

*Պատասխանատվության կիրառման առումով արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեության մասով համակարգչային սարքավորումները հավասարեցվում են ՀԳՄ-ներին:*

## **ՀԳՄ-ների գրանցումը հարկային տեսչությունում**

ՀԳՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող կազմակերպություններն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում դիմում՝ համաձայն ձևի, իրենց կողմից օգտագործման (շահագործման) համար նախատեսվող ՀԳՄ-ի (այդ բվում՝ վարձակալված կամ ժամանակավորապես օգտագործվող) գրանցման մասին:

Դիմումին կից ներկայացվում են ՀԳՄ-(ներ)ի անձնագիրը (անձնագրերը), պետական գրանցում ստացած՝ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի հետ կնքված ՀԳՄ-ի տեխնիկական սպասարկման և նորոգման պայմանագր(եր)ի պատճեն(եր)ը՝ մինչև ՀԳՄ-ի գրանցումն այդպիսի պայմանագրի կնքման դեպքում, իսկ շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտրի իրականացման դեպքում՝ նաև այդ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված առևտրի իրականացման թույլտվության պատճենները: ՀԳՄ-ի գրանցումից հետո կենտրոնի հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված առևտրի իրականացման նոր թույլտվության պատճենները ևս ենթակա են ներկայացվելու հարկային տեսչություն:

Հարկային տեսչությունը բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ՀԳՄ-ի գրանցում: Սակայն, փաստաթղթերը թերի ներկայացվելու, իսկ շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտրի իրականացման դեպքում առանց տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված առևտրի իրականացման առնվազն մեկ թույլտվության պատճենը չներկայացվելու դեպքերում հարկային տեսչությունը 1-օրյա ժամկետում բոլոր փաստաթղթերը վերադարձնում է կազմակերպություն՝ ՀԳՄ-ի չգրանցման պատճառների գրավոր հիմնավորմամբ:

Հարկային տեսչությունը ՀԳՄ-ի գրանցումից հետո այն կապարակնքում է հարկային տեսչության կլոր կնիքով՝ 2 տեղից (հանդիպակալ): Կապարակնքված ՀԳՄ-ն և փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են կազմակերպություններին միաժամանակ նրանց տալով հարկային տեսչությունում ՀԳՄ-ի գրանցման քարտի 1 օրինակը, իսկ փաստաթղթերի պատճենները պահվում են հարկային տեսչությունում:

Օգտագործվող ՀԳՄ-ն նորով փոխարինելու կամ լրացուցիչ ՀԳՄ տեղակայելու անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը պարտավոր է, նախքան նոր ՀԳՄ-ի օգտագործումը, հարկային տեսչություն

ներկայացնել դիմում՝ նոր ՀԴՄ-ի գրանցման և նախկինում գրանցված՝ փոխարինման ենթակա ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին: Կազմակերպությունը մեկ տրանսպորտային միջոցի վրա տեղակայված ՀԴՄ-ն մեկ այլ տրանսպորտային միջոցի վրա տեղակայելու համար պարտավոր է հարկային տեսչություն ներկայացնել դիմում, նախկինում գրանցված ՀԴՄ-ն գրանցումից հանելու և այն նոր տրանսպորտային միջոցի վրա գրանցելու մասին: Դիմումին կից ներկայացվում են նաև նշված փաստաթղթերը:

Հարկային տեսչությունը ՀԴՄ-ի փոխարինման կամ լրացուցիչ ՀԴՄ-ի տեղակայման, կամ տրանսպորտային միջոցի փոխանակման մասին դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նոր ՀԴՄ-ն և գրանցումից հանում նախկինում գրանցված ՀԴՄ-ն՝ կազմակերպությանը տալով նոր քարտ:

Կազմակերպության լուծարման, վերակազմավորման կամ բոլոր այն դեպքերում, երբ տվյալ կազմակերպությունում ՀԴՄ-ն հանվում է օգտագործումից, վերջինս հարկային տեսչություն է ներկայացնում դիմում՝ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին: Հարկային տեսչությունը 3 օրվա ընթացքում ՀԴՄ-ն հանում է գրանցումից և դրա մասին քարտում կատարում է համապատասխան գրառում, որը հաստատվում է հարկային տեսչության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

Կազմակերպությունը քարտը պահպանում է ՀԴՄ-ի օգտագործման վայրում օգտագործման ամբողջ ժամանակահատվածում, և ներկայացնում է հարկային տեսչության պահանջով: ՀԴՄ-ն օգտագործումից հանելու ժամանակ քարտը վերադարձվում է հարկային տեսչություն: Վերադարձված քարտը հարկային տեսչությունում պահվում է տվյալ ՀԴՄ-ն օգտագործումից հանելու օրվանից սկսած 3 տարվա ընթացքում: Շահագործողի պահանջով հարկային տեսչության կողմից նրան տրվում է տեղեկանք տվյալ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին:

### **Հարկային տեսուչի աշխատանքը ՀԴՄ-ի ֆիսկալային հիշողության հետ՝**

Հարկային տեսուչը՝

- ՀԴՄ-ի առաջին գրանցման ժամանակ մեքենայի հիշողություն է մուտքագրում հարկային տեսչության կողմից սահմանված՝ տվյալ հարկային տեսուչի նշանաբառը, որը հնարավորություն է տալիս նրան աշխատել ՀԴՄ-ի ֆիսկալային (հարկային) հիշողության հետ,

- ՀԳՄ-ի գրանցման ժամանակ ՀԳՄ է մուտքագրում գրանցման տարեթիվը, մեքենայի գործարանային համարը, հարկային տեսչությունում մեքենայի գրանցման համարը և օգտագործողի ՀՎՀՀ-ն և հարկային տեսուչի նշանաբառը:

Կազմակերպության կողմից հարկային տեսչություն ներկայացված ՀԳՄ-ի ֆիսկալային հիշողության համար կազմվում է ՀԳՄ-ի նորոգման ժամանակ ֆիսկալային (հարկային) հիշողության տվյալների մասին ակտ (սահմանված ձևի)՝ հարկային տեսուչի, կազմակերպության և կենտրոնի ներկայացուցչի ստորագրությամբ:

ՀԳՄ-ի վրա փակցված կապարակնիքները վնասելու իրավասություն ունեցող հարկային մարմնի պաշտոնատար անձանց շրջանակները սահմանում է Հարկային Պետական Ծառայությունը:

### **ՀԳՄ-ների գործարկումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը**

ՀԳՄ-ի տեղակայման, գործարկման ժամանակ կատարվում են տվյալ մոդելի ՀԳՄ-ի շահագործման կանոններով նախատեսված պարտադիր գործողություններ, և միաժամանակ լրացվում է ՀԳՄ-ի գործարկման ակտ (սահմանված ձևի):

Կազմակերպությունը վարում է ՀԳՄ-ի և նրա հանգույցների՝ բոլոր տեսակի խախտումների, կենտրոնում կատարվող նորոգումների և կազմակերպությունում կատարվող տեխնիկական սպասարկման (որոնք նախատեսված են տվյալ մոդելի ՀԳՄ-ի շահագործման կանոններով) մասին տվյալների գրանցման գիրք (սահմանված ձևի): Գրանցման գրքի էջերը համարակալվում և թելակարվում են կազմակերպության կողմից: Գիրքը կնքվում և համարակալվում է հարկային տեսչության կողմից: Կազմակերպություններն այդ տվյալները յուրաքանչյուր եռամսյակ, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ), ներկայացնում են Հարկային Պետական Ծառայություն՝ ՀԳՄ-ի գրանցման վայրի հարկային տեսչությանը տրամադրելու համար:

Կենտրոնն իր կողմից կատարված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների գծով վարում է հաշվառում այդ նպատակով բացված գրքում (սահմանված ձևի): Այդ գրքի էջերը համարակալվում և թելակարվում են սպասարկող կենտրոնի կողմից: Գիրքը կնքվում և համարակալվում է հարկային տեսչության կողմից: Կենտրոնները յուրաքանչյուր սպասարկվող և նորոգվող ՀԳՄ-ի նորոգման (տեխնիկական սպասարկման) աշխատանքների ավարտից անմիջապես

հետո ՀԳՄ-ի գրանցման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տեղեկանք տվյալ ՀԳՄ-ի վրա կատարված սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

Կենտրոնները յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանված կարգով և ժամկետում տեղեկություններ են ներկայացնում իրենց կողմից իրականացված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

Շահագործման գործարանային համարները, ՀԳՄ-ն շահագործող հարկ վճարողի ՀՎՀՀ-ն, հարկային տեսչություններում ՀԳՄ-ի գրանցման համարը և գործունեության իրականացման վայրը (հասցեն) նշվում են ՀԳՄ-ին առնչվող բոլոր փաստաթղթերում (դրամարկղային չեկ (կտրոն), հաշվետվություն և այլն):

**Ժամանակավորապես տրամադրվող կամ վարձակալությանը վերցրած ՀԳՄ-ների շահագործումը**

Կենտրոնի կողմից կազմակերպությանը՝ նորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար ժամանակավորապես տրամադրվող ՀԳՄ-ները, ինչպես նաև կազմակերպության կողմից վարձակալված ՀԳՄ-ները պետք է գրանցված լինեն հարկային տեսչությունում:

Կենտրոնի կողմից կազմակերպությանը՝ նորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար ժամանակավորապես տրամադրվող ՀԳՄ-ն տրամադրելու պահին գրանցվում են նրա ֆիսկալային (հարկային) հիշողության տվյալները, և տվյալ մեքենայի համար կազմվում է գործարկման ակտ և նշված ՀԳՄ-ն կապարակնքվում է:

Կազմակերպության ՀԳՄ-ն նորոգումից վերադարձնելու պահին՝ ժամանակավորապես տրամադրված ՀԳՄ-ից սպառվում է ընդլայնված ֆիսկալային (հարկային) հաշվետվությունը, որը կարվում է կազմակերպությունն սպասարկող հարկային տեսչությունում պահվող հարկային գործում: Նշված հաշվետվության՝ կազմակերպությանը վերաբերող մասը պետք է ներառված լինի կազմակերպության ընթացիկ հաշվապահական հաշվառման մեջ: Իսկ ժամանակավորապես տրամադրված մեքենայի պատասխանատու անձի հեթաբափոխի հաշվետվությունները սահմանված կարգով ձևակերպվում են կազմակերպությունում և դրա մասին կազմվում է ակտ (սահմանված ձևի):

Հարկային տեսչությունում ՀԳՄ-ի գրանցման քարտը, ՀԳՄ-ի անձնագիրը և կենտրոնների հետ կնքված պայմանագրերը պահպանվում են կազմակերպության գործունեության իրականացման վայրում:



## **ՀԳՄ-ն աշխատանքին նախապատրաստելը**

Կազմակերպությունում ՀԳՄ-ի միջոցով հաշվարկներն իրականացնելու համար այդ պարտականությունները սահմանված կարգով (հրամանով) դրվում են համապատասխան աշխատողի (պատասխանատու անձի) վրա: Պատասխանատու անձը պարտավոր է՝

- աշխատանքային օրվա (հերթափոխի) սկզբում ստուգել ՀԳՄ-ի աշխատանքը, ՀԳՄ-ում տեղադրել չեկային (կտրոնային) ժապավեն և այն միացնել,
- հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել դրամական գումարը, որոշել ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն,
- ՀԳՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն),
- ծառայությունների մատուցման դեպքում չեկը (կտրոնը) տրամադրվում է այդ ծառայության դիմաց կանխիկ վճարում ստանալու պահին,
- ՀԳՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս անջատել ՀԳՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձն անհրաժեշտության դեպքում սպասարկող կենտրոն է ներկայացնում հայտ, անսարքության վերացման համար, հայտի 1 օրինակը ներկայացնելով հարկային տեսչություն: Մինչև ՀԳՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԳՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է:

**Ուշադրություն.** *Պատասխանատու անձին արգելվում է կողմնակի անձանց թույլատրել աշխատել ՀԳՄ-ի հետ (քայառությանմ՝ իրավասու ղեկավար անձի թույլտվությամբ՝ հարկային տեսչության աշխատողների և տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետների):*

## **ՀԳՄ-ի վրա աշխատանքի ավարտը**

Պատասխանատու անձը հերթափոխի կամ աշխատանքային օրվա ավարտից հետո ՀԳՄ-ից դուրս է բերում հաշվետվության համարը, ընթացիկ հսկիչ ժապավենի համարը, գնումների թիվը, գնումների գումարը, վերադարձի թիվը, վերադարձի գումարը, չեղյալ համարման թի-

վը, չեղյալ համարման գումարը, հերթափոխային հասույթը, պատասխանատու անձի մոտ առկա կանխիկ գումարը, ինչպես նաև պատասխանատու անձի հերթափոխային հաշվետվությունը, որը հանդիսանում է սկզբնական փաստաթուղթ՝ հասույթը հաշվառելու համար, և պահպանվում է կազմակերպությունում տպվելու օրվանից 3 տարի: Հերթափոխային հասույթը՝ սահմանված կարգով, մուտքի օրդերի հիման վրա մուտքագրվում է կազմակերպության դրամարկղ: Պատասխանատու անձի հերթափոխային հաշվետվությունը տպվում է հսկիչ ժապավենի վրա, այն կարող է ստացվել ինչպես ընդունված՝ որպես էլեկտրոնային օրագիր՝ չեկերի (կտրոնների) համարների և չեկերը (կտրոնները) տպելու ժապավենի նշմամբ, այնպես էլ համառոտ՝ գնումների ընդհանուր հանրագումարով: Չեկի հաշվիչի մարումը պետք է իրականացվի հերթափոխի առաջին չեկի (կտրոնի) ստացումից 24 ժամվա ընթացքում:

### **Վաճառված ապրանքների հետընդունումը**

Վաճառված ապրանքների հետընդունման և գումարների սխալմամբ գրանցման դեպքերում կատարվում են հետևյալ ձևակերպումները՝

- ա) կազմակերպությունը դրամական հաշվարկների կատարման ընթացքում գնորդի կողմից վճարված գումարների՝ ՀԳՄ-ում գրանցման պահին, մինչև գնման չեկի (կտրոնի) փակումը, սխալմամբ մուտքագրված գումարները, կամ ապրանքի գնումից գնորդի հրաժարվելու դեպքում՝ այդ գումարները ՀԳՄ-ի միջոցով չեղյալ է համարում (չեղյալ համարված գումարը չի ներառվում հասույթի գումարի մեջ)։
- բ) կազմակերպությունը գնորդի կողմից գնված ապրանքների հետընդունման ժամանակ վերադարձի ձևակերպման պահին, գնման չեկի (կտրոնի) հիման վրա կազմում է վաճառված ապրանքների հետընդունման ակտ (սահմանված ձևի)։
- գ) գնորդի կողմից գնված ապրանքների հետընդունման ակտի հիման վրա ՀԳՄ-ի միջոցով տպվում է վերադարձի չեկ (կտրոն), որը ներառում է ՀԳՄ-ի գրանցման և գործարանային համարները, ՀՎՀՀ-ն, հետ ընդունվող ապրանքների գինը, օրը, ամիսը, տարեթիվը և ժամը, ինչպես նաև «Վերադարձ» նշագրումը: Այն դեպքում, երբ վաճառված ապրանքները հետ են ընդունվում օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է վաճառված ապրանքների հետընդունման ակտը. տվյալ դեպքում վերադարձի չեկ (կտրոն) չի տպվում։

- դ) եթե հետ է ընդունվում գնման չեկով (կտրոնով) գնված ապրանքների մի մասը, ապա վերադարձի չեկը (կտրոնը) տպվում է հետ ընդունվող ապրանքների համար վճարված գումարի չափով: Կազմակերպությունում պահպանվում է գնման չեկի (կտրոնի) պատճենը: Գնման չեկի (կտրոնի) բնօրինակի և պատճենի վրա հետ ընդունված ապրանքների համար վճարված գումարի դիմաց կարմիր գույնով կատարվում է «Վերադարձված է» գրառումը:
- ե) դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման չեկի (կտրոնի) փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված չեկի (կտրոնի) հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը (սահմանված ձևի) և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի չեկ (կտրոն): Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի չեկ (կտրոն) չի տպվում:
- զ) հետ ընդունված ապրանքների գնման, գումարների՝ սխալմամբ գրանցման և վերադարձի չեկերը (կտրոնները) ու լրացված ակտերի մեկական օրինակները պահպանվում են կազմակերպությունում՝ տպման (լրացման) օրվանից սկսած 3 տարվա ընթացքում:
- է) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը (ներառյալ), յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք (սահմանված ձևի):
- ը) վաճառված ապրանքների հետընդունման և գումարների՝ սխալմամբ գրանցման ակտերում նշված գումարները չեն ներառվում կազմակերպության իրացման շրջանառության մեջ, իսկ արդեն ներառված գումարների չափով կատարվում է ճշգրտում (կարմիր ստոռնոյով): Չեղյալ համարման, վերադարձի և

սխալմամբ գրանցված գումարները ներառվում են կազմակերպության իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ, եթե՝

- բացակայում է համապատասխան ակտը կամ ակտի տվյալներից որևէ մեկը,
- սահմանված կարգով և ժամկետում հարկային տեսչություն չի ներկայացվել կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը,
- չեղյալ համարման, վերադարձի և սխալմամբ գրանցված տվյալ գումարը չի ներառվել հարկային տեսչություն ներկայացված տեղեկանքում:

## 4.

### ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ

### ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

---

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձինք, պետական և այլ հիմնարկները, դրանց առանձնացված ստորաբաժանումները, օտարերկրյա կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումները (բացառությամբ՝ բանկերի (այդ թվում՝ օտարերկրյա) և դրանց առանձնացված ստորաբաժանումների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների) դրամարկղային գործառնությունները իրականացնում են «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (և այլ իրավական ակտերի) դրույթներին համապատասխան:

Դրամարկղային գործառնություններն իրականացվում են դրամարկղի կամ հաշվետու անձանց միջոցով: Գանձապահն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողնումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից: Երբ բանկից ստացված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության դրամարկղ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը բանկային հաշվից հանելու հաջորդ

օրը: Գրամարկդից ելքագրված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության բանկային հաշիվներ՝ առնվազն կանխիկ դրամը դրամարկդից հանելու հաջորդ օրը: Գանձապահին արգելվում է իր պարտականությունների կատարումը փոխանցել ուրիշ անձանց՝ առանց կազմակերպության ղեկավարի հրամանի (որոշման): Գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրել դրամարկդային փաստաթղթերը (բացառությամբ՝ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում 3-ը):

**Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները**

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանված են հետևյալ սահմանափակումները՝

ա) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը՝

Սահմանափակման կիրառման ամսաթիվը (սկսած)	Սահմանափակման մեծությունը (հազ. դրամ)
01.07.2003 թ.	500,0
01.01.2004 թ.	300,0
01.01.2005 թ.	300,0

բ) մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը՝

Սահմանափակման կիրառման ամսաթիվը (սկսած)	Սահմանափակման մեծությունը (մլն. դրամ)
01.07.2003 թ.	5,0
01.01.2004 թ.	3,0
01.01.2005 թ.	3,0

Կանխիկ դրամով վճարում են համարվում գնման դիմաց կատարված բոլոր վճարումները (ներառյալ՝ կանխավճարները, առհաշիվ տրված կանխիկ դրամի հաշվին կատարվող վճարումները):

**Ուշադրություն.** Սահմանափակումները չեն տարածվում հետևյալ վճարումների վրա՝

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- նպաստներ, կրթաթոշակներ, կենսաթոշակներ և այլ համանման վճարումներ,
- գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումներ,
- ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումներ,
- ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությանը մատուցված ծառայությունների և կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումներ,
- ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումներ,
- գյուղատնտեսական մթերքներ մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություն վարող քաղաքացիների հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գնված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումներ,
- Կառավարության կողմից սահմանված չափաքանակներով պետական հատուկ նշանակության ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարումներ,
- Կառավարության սահմանած դեպքերում անհետաձգելի վճարումներ կատարելու անհրաժեշտության առկայության դեպքում կատարվող վճարումներ:

### **Առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ սահմանափակումները**

Միևնույն անձին առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվությունը կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին դեռևս չի ներկայացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել:

Կազմակերպությունների կողմից գործուղման, ինչպես նաև գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ սահմանված են ժամկետային սահմանափակումներ՝

- գործուղումից տարբեր նպատակներով առհաշիվ տրված կանխիկ դրամը հաշվետու անձի կողմից պետք է ծախսվի ըստ նպատակի կամ վերադարձվի կազմակերպության դրամարկղ, կամ բանկային հաշիվ՝ կանխիկ դրամը հաշվետու անձին տրամադրվելուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում, իսկ այդ ժամկետը լրանալու պահին աշխատողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու դեպքում՝ աշխատանքի վերադառնալուց հետո 3 օրվա ընթացքում:
- գործուղման նպատակով տրված կանխիկ դրամի՝ ըստ նպատակի չծախսված մասը պետք է կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ վերադարձվի գործուղման ավարտից հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, իսկ այդ ժամկետը լրանալու պահին աշխատողի ժամանակավոր անաշխատունակության կամ արձակուրդում գտնվելու դեպքում՝ աշխատանքի վերադառնալուց հետո 3 օրվա ընթացքում:

Գործուղումից տարբեր, ինչպես նաև գործուղման նպատակով տրվող առհաշիվ գումարների ծախսման վերաբերյալ հաշվետու անձը սահմանված ժամկետներում հաշվապահություն է ներկայացնում առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն:

**Ուշադրություն.** *Առհաշիվ տրված գումարների նկատմամբ սահմանափակումները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում 2-ը:*

Դրամարկղային գործառնությունների իրականացման (այդ թվում՝ դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի վարման, կանխիկ դրամի դրամարկղ մուտքագրման և ելքագրման) կարգը սահմանված է Կառավարության 08.10.2003թ. N 1408-Ն որոշմամբ:

Համաձայն այդ որոշման կազմակերպության դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) փաստաթղթավորումը կատարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան հաշվապահական հաշվառումը վարող ստորաբաժանման կամ անձի, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից լիազորված այլ անձի կողմից՝ դրամարկղային մուտքի օրդերով: Մուտքի օրդերն ունի կտրվող մաս՝ անդորրագիր: Մուտքի օրդերի ձախ մասն ստորագրվում է գլխավոր հաշվապահի, գանձապահի և վճարողի, իսկ աջ մասը՝ անդորրագիրը, ստորագրվում է գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից: Ստորագրված մուտքի օրդերը կնքվում

է գանձապահի դրոշմակնիքով կամ կազմակերպության կնիքով՝ այնպես, որ միաժամանակ կնքված լինեն մուտքի օրդերի և ձախ մասը, և աջ մասը (անդորրագիրը), որից հետո այն տրվում է դրամը վճարողին:

Այն կազմակերպությունները, որոնք կատարած աշխատանքների, մատուցած ծառայությունների, վաճառած ապրանքների և արտադրանքի դիմաց ստացվող կանխիկ դրամը հավաքում են նաև կազմակերպությունների տարածքից դուրս՝ լիազորված կամ համապատասխան իրավունք ունեցող անձանց միջոցով, ապա վերջիններս գումարը մուտքագրում են կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ՝ կանխիկ դրամի հավաքման պահից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Այն կազմակերպություններում, որտեղ ներդրված են ՀԳՄ-ներ, դրանց միջոցով օրական գրանցված տվյալների հիման վրա ստացված կանխիկ դրամը մուտքի օրդերով մուտքագրվում է կազմակերպության դրամարկղ կամ կազմակերպության բանկային հաշիվ՝ կանխիկ դրամի ստացման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Կազմակերպության դրամարկղից կանխիկ դրամի ելքագրման (վճարման) փաստաթղթավորումը կատարվում է դրամարկղային ելքի օրդերով: Սեկից ավելի անձանց մեկ միասնական փաստաթղթով կազմակերպության դրամարկղից կանխիկ դրամով վճարումների (աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, դրանց հավասարեցված վճարներ, նպաստներ, կրթաթոշակներ, կենսաթոշակներ և այլ վճարներ) իրականացման դեպքում կազմվում է վճարային տեղեկագիր: Տեղեկագրով կատարված բոլոր վճարումների հանրագումարով՝ վճարումների դադարեցման օրը (այսինքն՝ տեղեկագրով նախատեսված բոլոր վճարումներն ավարտելու կամ տեղեկագրի վրա նշված վճարման ժամկետը լրանալու օրը, իսկ եթե ժամկետը չի լրացել՝ ամսվա վերջին օրը) կազմվում է ելքի 1 օրդեր: Առանձին անձանց աշխատավարձ և այլ վճարներ կարող են վճարվել նաև առանձին ելքի օրդերով: Կազմակերպության ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը, գլխավոր հաշվապահը, գանձապահը և դրան ստացողն ստորագրում են ելքի օրդերը: Ընդ որում՝ եթե ելքի օրդերին կցվող փաստաթղթերում (դիմում, հաշիվ, տեղեկագիր, հաշվետվություն և այլն) առկա են դրան վճարելու վերաբերյալ կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի և գլխավոր հաշվապահի թույլատրող մակագրությունները, ապա նրանց ստորագրությունները ելքի օրդերի վրա կարող են չդրվել:

Գանձապահը կազմակերպության դրամարկղից կանխիկ դրամը վճարում է միայն այն անձին, որի ազգանունը և անունը նշված են ելքի



օրդերում կամ տեղեկագրում: Եթե դրանք վճարվում է լիազորագրով, ապա հաշվապահությունը ելքի օրդերում նշում է նաև այն անձի ազգանունը և անունը, որին լիազորվել է դրամի ստացումը: Լիազորագիրը մնում է գանձապահի մոտ և կցվում էլքի օրդերին կամ տեղեկագրին: Լիազորագրի տվյալները (համարը, ում կողմից և երբ է այն տրված) լրացվում են էլքի օրդերի կամ տեղեկագրի այլ տեղեկությունների համար նախատեսված տողում կամ սյունակում:

Հաշվապահությունը կազմակերպության դրամարկղից աշխատավարձ և այլ վճարներ վճարելու համար տեղեկագրի առաջին էջի վրա բառերով նշում է վճարման ենթակա ընդհանուր գումարը և վճարման ժամկետները, իսկ կազմակերպության ղեկավարն ու գլխավոր հաշվապահն ստորագրում են և կատարում թույլատրող մակագրություն: Գանձապահը, տեղեկագրի վրա նշված վճարման ժամկետը լրանալու դեպքում, իսկ եթե ժամկետը չի ավարտվել՝ ամսվա վերջին, աշխատավարձը և այլ վճարներ չստացած անձանց ազգանվան դիմաց դրոշմով կամ ձեռագիր նշում է «Չի վճարված» բառերը, իսկ տեղեկագրի առաջին էջի վրա կատարում է փաստացի վճարված ու չվճարված աշխատավարձի և այլ վճարների մասին գրառում՝ ստորագրելով դրա մոտ:

Կազմակերպության կողմից, իր հայեցողությամբ, դրամարկղային մուտքի և էլքի օրդերների գրանցման մատյանի վարման դեպքում՝ հաշվապահությունը նախքան մուտքի և էլքի օրդերները գանձապահին հանձնելը, դրանք գրանցում է դրամարկղային մուտքի և էլքի օրդերների գրանցման մատյանում:

Մուտքի և էլքի օրդերները համարակալվում են առանձին, այսինքն՝ մուտքի օրդերները համարակալվում են առանձին հերթականությամբ, իսկ էլքի օրդերները՝ առանձին: Համարակալումները վերսկսվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից: Մուտքի և էլքի օրդերներում սխալների ուղղում կատարել չի թույլատրվում, իսկ տեղեկագրում կատարված սխալներն ուղղելիս անհրաժեշտ է կատարված սխալ գրանցման վրա գիծ քաշել այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը, և ազատ մասում կատարել նոր գրառում: Կատարված ուղղումները հավաստվում են տեղեկագիրն ստորագրելու իրավունք ունեցող անձանց և դրանն ստացողի ստորագրություններով՝ նշելով ուղղման ամսաթիվը:

Դրամարկղային գործառնությունների սկզբնական հաշվառման փաստաթղթերի ձևերը լրացվում են ձեռագիր (գրչով) կամ տպագիր, ընդ որում, կազմակերպությունները կարող են դրանցում ավելացնել

լրացուցիչ վավերապայմաններ, տողեր, սյունակներ, հանել չօգտագործվող վավերապայմանները, տողերը, սյունակները, փոխել ձևաչափը, ինչպես նաև սահմանել և օգտագործել լրացուցիչ ձևեր:

### **Դրամարկղային գրքի վարումը**

Կանխիկ դրամի բոլոր մուտքագրումները և ելքագրումները գրանցվում են դրամարկղային գրքում մուտքի և ելքի օրդերների հիման վրա:

Կազմակերպությունն իր կողմից օգտագործվող յուրաքանչյուր արժույթի համար վարում է առանձին դրամարկղային գիրք, որի թերթերը պետք է լինեն համարակալված, թելակարված: Դրամարկղային գիրքը կնքվում և համարակալվում է հարկային մարմնի կողմից:

Գանձապահը դրամարկղային գրքում գրանցումները կատարում է գրչով, պատճենահան թղթի օգնությամբ՝ 2 օրինակից: Արգելվում է դրամարկղային գրքում ջնջումներ և առանց ծանոթագրության ուղղումներ կատարելը: Ուղղումների մասին ծանոթագրության կատարման համար անհրաժեշտ է սխալ կատարված գրանցման վրա գիծ քաշել այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և կատարել նոր գրառում: Կատարված ուղղումները վավերացվում են գանձապահի և գլխավոր հաշվապահի ստորագրությամբ՝ նշելով ուղղումը կատարելու ամսաթիվը: Դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան կանխիկ դրամի ստացման կամ վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկագրով կանխիկ դրամ վճարելիս՝ դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է դրամարկղային ելքի օրդերի կազմման օրը: Դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակումը կատարվում է ոչ պակաս, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, ոչ ուշ, քան ամսվա վերջին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: Գանձապահը եզրափակելիս հաշվում և գրանցում է բոլոր մուտքագրված և ելքագրված գումարների հանրագումարները, ինչպես նաև եզրափակման օրվա վերջի դրությամբ դրամարկղում առկա կանխիկ դրամի մնացորդը: Գանձապահը դրամարկղային գրքի եզրափակված թերթի կտրվող մասը՝ մուտքի ու ելքի օրդերների և դրանց կից փաստաթղթերի հետ միասին, որպես գանձապահի հաշվետվություն, հանձնում է հաշվապահության, որի դիմաց ընդունող հաշվապահն ստորագրում է դրամարկղային գրքում:

## **Պատասխանատվությունը**

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի (խախտման գումար) 5%-ի չափով (բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը):

Սահմանափակումների չպահպանելը արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10%-ի չափով (բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկը):

Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելը արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում դրանք կրկին չգրանցելու դեպքում տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով:

Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտումը արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում դրանք կրկին խախտելու դեպքում տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով:

Տուգանքները ենթակա են վճարման պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց հետո 10-օրյա ժամկետում: Այդ ժամկետում չվճարելու դեպքում գումարները գանձվում են հարկային մարմինների հայտով՝ հօգուտ պետական բյուջեի:

# 5.

## ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԻ ՎԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող կամ տեղափոխող կազմակերպությունները (այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված առանձնացված ստորաբաժանումները) և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են վարել դրանց հաշվառումը՝ գրանցումներ կատարելով առաքումների գրանցման գրքում:

**Ուշադրություն.** *Առաքումների գրանցման գրքում չի գրանցվում պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը, խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մասնույի տեղափոխումը, վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստառանքների կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը, տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:*

Առաքումների (տրամադրումների) կամ տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա) համար (պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստ, այլ մատակարարման վայրեր) վարվում է առանձին առաքումների գրանցման գիրք: Առաքումների գրանցման գիրքը տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են աշխատանքի ընթացքում պահել արտադրանքի, ապրանքի անմիջական առաքման (բացթողման) կետում (շինությունում, վայրում):

Առաքումների գրանցման գրքի կազմի վրա նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, ՀՎՀՀ-ն, գտնվելու (բնակության) վայրը և առաքումների գրանցման գրքի հերթական համարը: Առաքումների իրականացման վայրի (կետի) հասցեն տնտեսավարող սուբյեկտի գտնվելու (բնակության) վայրից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի (կետի) հասցեն:

Տնտեսավարող սուբյեկտը առաքումների գրանցման գրքի էջերը համարակալում, կարում և կազմում է, որից հետո սահմանված ձևի գրավոր հայտի հետ միասին ներկայացնում է իր հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմինը հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում ու համարակալում է առաքումների գրանցման գիրքը՝ դրա վրա փակցնելով հարկային մարմնի տարբերանշանի պատկերով ինքնաստանձվող դրոշմանիշ: Տրանսպորտային միջոցներով առևտրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների առաքումների գրանցման գրքերը սահմանված կարգով կնքվում և համարակալվում են՝ հարկային մարմնի ղեկավարի գրավոր թույլտվության հիման վրա: Լրացված-ավարտված առաքումների գրանցման գրքերը պահվում են տնտեսավարող սուբյեկտի մոտ մինչև գրքում ամենավերջին գրանցման օրից սկսած 3 տարին լրանալը և ներկայացվում հարկային մարմիններ՝ նրանց պահանջի դեպքում: Մինչև առաքումների գրանցման գրքի լրանալ-ավարտվելը տնտեսավարող սուբյեկտը կարող է հարկային մարմին ներկայացնել նոր առաքումների գրանցման գիրք՝ կնքման և համարակալման: Սակայն, նոր առաքումների գրանցման գրքում գրանցումները կատարվում են միայն հարկային մարմնի կողմից նախկին առաքումների գրանցման գրքի վերջին գրառումից անմիջապես հետո հարկային մարմնի կողմից «Գիրքն ավարտված է» նշումը կատարվելուց և կնքվելուց հետո:

**Առաքվող (տրամադրվող) և տեղափոխվող արտադրանքի, սպարանքների (այսուհետ՝ սպարանք) գրանցման կարգը**  
**Առաքվող (տրամադրվող) սպարանքը ներառում է՝**

- տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտներին իրացնելու համար նախատեսված սպարանքը (այդ թվում՝ կոմիսիոն վաճառքի ձևով և այլն),
- իրացման համար չնախատեսված պատրաստի արտադրանքի, սպարանքների տրամադրումը (այդ թվում՝ անհատույց),
- առևտրական կետից տնտեսավարող սուբյեկտներին իրացվող (վաճառվող, տրամադրվող) սպարանքը:

Սպարանքների առաքումն (տրամադրումն) իրականացվում է սահմանված կարգով լրացվող սկզբնական հաշվարկային փաստաթղթերի (սպարանքա-տրանսպորտային բեռնագիր, պահեստի ելքի անդորրագիր, հաշիվ-սպարանքագիր և այլն) հիման վրա:

Առաքման (տրամադրման) դեպքում առաքումների գրանցման գրքում ապրանքի բացթողման համար պատասխանատու համապատասխան անձի կողմից գրանցումներ կատարվում են նախապես՝ մինչև տնտեսավարող սուբյեկտի տարածքից ապրանքի դուրսբերումը (տեղափոխման սկիզբը), յուրաքանչյուր հաշվարկային փաստաթղթի համար առանձին-առանձին՝ ըստ առաքման (տրամադրման) կամ տեղափոխման համար հաշվարկային փաստաթղթերի լրացման հաջորդականության, գրանցման հերթական համարներով:

Առաքումների գրանցման գրքում առաքումն (տրամադրումն) իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից հերթական համարով գրանցվում է առաքվող ապրանքատեսակի խոշորացված խմբի անվանումը (օրինակ՝ սննդամթերք, շինանյութ և այլն), հաշվարկային փաստաթղթի տվյալները, տվյալ տարածքից տեղափոխման ձևը (տրանսպորտային միջոցի տեսակը, մակնիշը, պետհամարանիշը (համարը) կամ նշում առձեռն (առանց տրանսպորտային միջոցի) տեղափոխման մասին և ապրանքի հասցեագրման (տեղափոխման) վայրը: Գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և անմիջապես հաջորդ տողում կատարվում ճիշտ գրառումը: Ձևզված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում սխալ գրառման մասին:

Առաքումների գրանցման գրքում գրանցում կատարելուց հետո գնորդին (ստացողին) տրվող հաշվարկային փաստաթղթի վերևի աջ անկյունում կատարվում է «Առաքողի գրանցման գրքի N \_\_\_\_» գրառումը՝ որտեղ լրացվում է գրանցման գրքի էջի՝ տվյալ հաշվարկային փաստաթղթի գրանցման տողի հերթական համարը:

***Տեղափոխվող ապրանքը ներառում է*** պատրաստի արտադրանքի պահեստից կամ այլ վայրերից ֆիրմային խանութ, պահեստից վաճառքի կետ կամ այլ վայր (պահեստ և այլն) տեղափոխվող պատրաստի արտադրանքը, ապրանքը, ինչպես նաև մաքսատուն կամ մաքսային կետ տեղափոխվող կամ ի պահ հանձնվող ապրանքը:

Տեղափոխվող ապրանքների հետ պետք է լինեն համապատասխան հաշվարկային փաստաթղթեր՝ «Գրանցման գրքի N \_\_\_\_» գրառումով: Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար (եթե ապրանքը գտնվում է մաքսագերծման վայրերից դեպի առաջին նշանակման կետ ճանապարհին)՝ մաքսային համապատասխան փաստաթղթեր (փոխադրման ամփոփագիր, մաքսային հայտարարագիր):

Ապրանքներ տեղափոխելիս ապրանքներ տեղափոխողի (առաքող, գնորդ կամ տրանսպորտային կազմակերպության) մոտ առկա հաշվարկային փաստաթղթում տեղափոխման ձևի և վայրի մասին կատարված նշումը պետք է համընկնի առաքողի գրանցման գրքում կատարված համապատասխան նշման հետ:

## **6. ՀԱՍՈՒՅԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐԵԻ ՎԱՐՈՒՄԸ**

Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով) կազմակերպությունները (այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված առանձնապես ստորաբաժանումները) և անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր, պարտավոր են առևտրի իրականացման վայրում վարել արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման գիրք:

**Ուշադրություն.** *Հասույթի գրանցման գրքում գրանցումներ չեն կատարվում ոչ նյութական ակտիվների, անշարժ գույքի և հրատարակվող թերթերի վաճառքի դեպքում:*

Առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման յուրաքանչյուր վայրի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով գրանցումների գրանցման գրքի կազմի վրա) համար վարվում է առանձին հասույթի գրանցման գիրք: Տնտեսավարող սուբյեկտներն աշխատանքի ընթացքում (վաճառք իրականացնելիս) պարտավոր են գրանցման գիրքը պահել առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման վայրում (կետում):

Հասույթի գրանցման գրքի կազմի վրա նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, ՀՎՀՀ-ն, գտնվելու (բնակության) վայրը և հասույթի գրանցման գրքի հերթական համարը:

Տնտեսավարող սուբյեկտը հասույթի գրանցման գրքի էջերը համարակալում, կարում և կազմում է, որից հետո սահմանված ձևի գրա-

վոր հայտի հետ միասին ներկայացնում է իր հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմինը հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում ու համարակալում է հասույթի գրանցման գիրքը՝ դրա վրա փակցնելով հարկային մարմնի տարբերանշանի պատկերով ինքնասունձվող դրոշմանիշ: Լրացված-ավարտված հասույթի գրանցման գրքերը պահվում են տնտեսավարող սուբյեկտի մոտ մինչև գրքում ամենավերջին գրանցման օրից սկսած 3 տարին լրանալը և ներկայացվում հարկային մարմիններ՝ նրանց պահանջի դեպքում: Մինչև հասույթի գրանցման գրքի լրանալ-ավարտվելը տնտեսավարող սուբյեկտը կարող է հարկային մարմին ներկայացնել նոր հասույթի գրանցման գիրք՝ կնքման և համարակալման: Սակայն, նոր հասույթի գրանցման գրքում գրանցումները կատարվում են միայն հարկային մարմնի կողմից նախկին գրքի վերջին գրառումից անմիջապես հետո հարկային մարմնի կողմից «Գիրքն ավարտված է» նշումը կատարվելուց և կնքվելուց հետո: Լրացված-ավարտված գրքում գրանցված, սակայն չիրացված արտադրանքի, ապրանքերի մնացորդը շարունակվում է հաշվառվել լրացված-ավարտված գրքում մինչև իրացումը (բացառությամբ՝ գնային փոփոխությամբ պայմանավորված նոր տողից գրանցման դեպքերի):

### **Վաճառվող ապրանքների և դրանց գների գրանցումը**

Գրանցման գրքերում գրանցման ենթակա են ձեռք բերված (սեփական արտադրության արտադրանքի դեպքում՝ վաճառքի իրականացման վայրում (կետերում) ընդունված) բոլոր ապրանքները ստանալուց անմիջապես հետո, մինչև վաճառքի հանելը (բայց ոչ ուշ քան մինչև ապրանքները ստանալու օրվա ավարտը)՝ անկախ առևտրի իրականացման ձևից՝ մեծածախ կամ մանրածախ: Գրանցման գրքում հերթական համարով նշվում են ապրանքի ստացման ամսաթիվը, մուտքի փաստաթղթի տվյալները (համարը, ամսաթիվը և ընդհանուր գումարը), ապրանքի անվանումը, չափի միավորը, քանակը, միավորի վաճառքի գինը (փոփոխությունները): Գրանցման գրքում գրանցված գներից տարբերվող վաճառքի այլ գների գրանցումը պարտադիր չէ, եթե համապատասխան կարգով հաշվառվող փաստաթղթերով (հաշիվ-ապրանքագիր, գնման ակտ և այլն) հիմնավորվում է ապրանքների այլ գներով իրացումը: Գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և անմիջապես հաջորդ տողում կատարվում ճիշտ գրանցումը: Ձևջված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում սխալ գրառման մասին:



Տնտեսավարող սուբյեկտները, մինչև ապրանքի վաճառքը, սահմանված կարգով լրացնում և տեղադրում են գնապիտակներ:

Աշխատանքային օրվա վերջում տնտեսավարող սուբյեկտների կողմից ամեն օրվա արդյունքներով գրանցման գրքերում կատարվում է փաստացի կանխիկ հասույթների գրանցում՝ գրանցման գրքի վերջին 6 էջում «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» 1 տարվա համար նախատեսված մասում, ըստ ամսաթվերի: Այդ մասը լրանալուց՝ ավարտվելուց հետո տնտեսավարող սուբյեկտներին կարող է տրվել հարկային մարմինների կողմից կնքված «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մասի նոր էջեր հաջորդ 1 տարվա համար: Հասույթների գումարները սահմանված կարգով և դեպքերում մուտքագրվում են տնտեսավարող սուբյեկտի դրամարկղ, հաշվառվելով դրամարկղային գրքերում, որոնք նույնպես պետք է կնքված և հաշվառված լինեն տնտեսավարող սուբյեկտի հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից:

ՀԳՄ-ների պարտադիր կիրառմամբ դրամական հաշվարկներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար հասույթի գրանցման գրքի «Օրական հասույթների գրանցում (հաշվառում)» մասի լրացումը պարտադիր չէ:

## 7.

### **ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՐՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՇՏԱՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՇԱՄԱՐ**

---

#### **Ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը**

Ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու (այսինքն՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները սահմանված կարգով չգրանցելու) դեպքում տնտեսավարող սուբյեկտներից զանձվում է տուգանք՝

ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25%-ի չափով (այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար):

Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու կրկնական փաստ արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝

ձեռնարկատիրական գործունեության չգրացված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 50%-ի չափով (այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար):

**Ձեռնարկատիրական գործունեության առարկաները գրանցված գներից թանկ վաճառելը (իրացնելը)**

Ձեռնարկատիրական գործունեության առարկաները գրանցված գներից թանկ վաճառելիս (իրացնելիս) տնտեսավարող սուբյեկտներից գանձվում է տուգանք՝

տարբերության գումարի 25%-ի չափով (այդ թվում՝ չվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների մնացորդների համար):

Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, ձեռնարկատիրական գործունեության առարկաները գրանցված գներից թանկ վաճառելու (իրացնելու) կրկնական փաստ արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝

տարբերության գումարի 50%-ի չափով (այդ թվում՝ չվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների մնացորդների համար):

**Ուշադրություն.** Տուգանքները մուծվում են խախտման փաստն արձանագրվելուց հետո 30-օրյա ժամկետում: Այդ ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումները կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանում, որի համար սահմանված կարգով տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված են հաշվապահական հաշվետվություններ (հայտարարագրեր) կամ իրացման շրջանառությունից (համախառն եկամտից) բխող հարկային պարտավորություններն արտացոլող՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:



**Ձեռնարկ  
ՓՈՔԻ ԵՎ ՄԻՋԻՆ  
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Էջադրումը և ձևավորումը  
Ա. Հարությունյանի

Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԳԱՐ» ՍՊԸ  
Տպագրությունը՝ «ԷԳԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ  
Տպաքանակ՝ 500